# Քրիստոնյա Հայաստան

2011, ՕԳՈՍՏՈՍ Ա, ԹԻՎ 15 (347)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


*21 օգոստոսի*

## ՏՈՆ ԾՆՆԴՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ

*Ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ եւ աղոթում, որ ամենակարող ու ամենագութ Տերը պահի-պահպանի, երկար ու անխռով կյանքի բեղմնավոր օրեր շնորհի Ձեզ: Աղոթում ենք, որ Աստված Իր հայրական օրհնությամբ ու սիրով հավելի Ձեր ուժն ու եռանդը, իմաստությունն ու հեռատեսությունը, ողջամտությունն ու ողջախոհությունը, որ կարողանաք Ձեր հոգնատանջ ու բազմազբաղ օրերի ու տարիների մեջ Տիրոջ խաղաղության ու բերկրանքի հունդից Ձեր արդար մասնաբաժինն առած՝ բաշխեք Ձեր զավակներին՝ մշտապես վեր կանգնելով նրանց ամենայն արժանի ու անարժան դրսեւորումներից:*

*Թող Աստված մեզ էլ հանձնառու դարձնի մեր մեղքերին եւ ապաշխարության քաղցրություն պարգեւի, որպեսզի ի զորու լինենք Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու առաքելությունն ու դերը արժեւորելու՝ դեպի Տերն ընթացող մեր կյանքի ճանապարհին: Մենք որդիական անկեղծ ու անչափ սիրով կամենում ենք բացել մեր սրտերն ու աղոթել, խնդրել մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ ամեն բացվող օրվա մեջ տեսնենք Ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր գործերի ու ծրագրերի կատարումը, որ ամեն Աստծո գիշեր քուն մտնենք լիարժեք բավարարվածության զգացումով եւ այն հաստատ հույսով, որ Ձեր եւ մեր Տանը Սերն ու Լույսը, Գեղեցիկն ու Բարին են թագավորում՝ ի շահ համայն հայ ժողովրդի, Մայր Եկեղեցու պայծառացման եւ հայրենիքի ու պետականության զարգացման ու ամրապնդման:*

*Որդիական սիրով՝*

*Մատչիմք ի համբույր Ձերդ օծեալ սուրբ աջոյն՝*

***«Քրիստոնյա Հայաստան»***
***թերթի խմբագրություն***



## ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ 155-ԱՄՅԱԿԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հուլիսի 31-ին հնդկահայոց հոգեւոր հովվությունը Կալկաթայի Սբ Նազարեթ մայր եկեղեցում տոնեց հայ անվանի երաժիշտ Մակար Եկմալյանի ծննդյան155-ամյակը:



Երեկոն սկսվեց Հայոց մարդասիրական ճեմարանի երգչախմբի կողմից մեծ երգահանի «Ով հայոց Աստված» երգի կատարմամբ, որին հաջորդեցին մեծանուն կոմպոզիտորի մի շարք ստեղծագործություններ:

Համերգի ավարտին հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Խորեն վրդ. Հովհաննիսյանը ներկաներին հանգամանալից ներկայացրեց Մակար Եկմալյանի կյանքն ու գործունեությունը, նրա թողած ժառանգությունը, անդրադարձավ այն բացառիկ դերակատարությանը, որ ունի մեծ երգահանը հայ հոգեւոր եւ աշխարհիկ երգարվեստում:

Ձեռնարկին մասնակցեցին եկեղեցու վարչության անդամները, կալկաթաբնակ հայորդիները, Հայոց մարդասիրական ճեմարանի ուսուցիչները, աշակերտները, հրավիրյալները:

## Հայաստանի խաղաղապահ զինուորները Հեսենի հայ համայնքում

31 յուլիս 2011-ին, Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան տօնի՝ Վարդավառի առիթով Հեսենի հայ համայնքը Հանաու քաղաքի մէջ հիւրընկալեց Հայաստանից ժամանած շուրջ 40 խաղաղապահ զինուորի՝ ղեկավարութեամբ խմբի հրամանատար փոխգնդապետ Սահակեանի: Հայ զինուորականները Գերմանիայում են գտնւում իրենց զինուորական պատրաստութիւնը կատարելագործելու, այնուհետեւ Աֆղանստան մեկնելու համար: Մեր զինուորականները, համաձայն Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութեան, գերմանացի խաղաղապահ զինուորականների հետ միասին ապահովում են Աֆղանստանի Քունդուշ քաղաքի օդանաւակայանի անվտանգութիւնը: Նախքան իրենց 6-ամսեայ խաղաղապահ ծառայութեան վայրը մեկնելը՝ հայ զինուորականները ներկայ գտնուեցին Վարդավառի Պատարագին եւ ստացան Հաղորդութիւն:

Պատարագից յետոյ տեղւոյն համայնքի կողմից, Վարդավառի տօնակատարութեան առիթով եւ ի պատիւ զինուորականների, կազմակերպուել էր դաշտահանդէս, որին բացի զինուորականներից՝ ներկայ եղավ Հանաու քաղաքի եւ շրջակայքի շուրջ 150 հայորդի: Գնդի հրամանատար փոխգնդապետ Սահակեանն ու փոխհրամանատար փոխգնդապետ Ղուկասեանն իրենց երախտագիտութիւնը յայտնեցին հոգեւոր հովուին եւ համայնքի վարչութեանը՝ սիրալիր եւ ջերմ ընդունելութեան համար՝ նշելով, որ իրենց համար շատ կարեւոր է, նախքան խաղաղապահ ծառայութեան մեկնելը, այցելել հայ եկեղեցի, ճաշակել սբ Հաղորդութիւն եւ Տիրոջ օրհնութեամբ մեկնել պատասխանատու առաքելութեան: Միաժամանակ իրենք ուրախ են, որ ամէն անգամ հայ համայնքը սիրով է շրջապատում իրենց, եւ իրենք քաջալերւում են՝ տեսնելով մեր հայրենակիցների ջերմ վերաբերմունքն ու սէրն իրենց հանդէպ:

Վերջում հայր Սերովբէն ներկաներին յիշեցրեց, որ մի քանի շաբաթներ յետոյ Հայաստանն ու հայութիւնը պատրաստւում են նշելու Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման 20-ամեակը: Աստուած ներկայ հայ սերունդներին պարգեւեց կերտելու Հայաստանի անկախ պետութիւնը, եւ իւրաքանչիւր հայ՝ անկախ բնակութեան վայրից, նուիրական պարտականութիւնն ունի նպաստելու մեր անկախ հայրենիքի զարգացմանն ու հզօրացմանը: Իսկ հայ զինուորն այսօր ապահովում է ոչ միայն իր հայրենիքի անվտանգութիւնը, այլեւ իր մասնակցութիւնն է բերում տագնապավտանգ երկրներում խաղաղութեան պահպանմանը:

***Հեսենի հայ համայնքի***
***վարչութիւն***



# Երեւանում բացվեց նոր գրատուն

Հուլիսի 29-ին Երեւանում տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գրատան բացման արարողությունը՝ հանդիսապետությամբ Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպս Ժամկոչյանի:

Ներկաներին ողջունեց գրատան տնօրեն Կարեն Հակոբյանը՝ ուրախություն հայտնելով կարեւոր այս ծրագիրը կյանքի կոչելու առթիվ եւ վստահեցնելով, որ գրատունը հոգեւոր գրականության մատակարարմամբ մեծ ծառայություն կբերի հայ ժողովրդին:

Այնուհետեւ կատարվեց օրհնության արարողությունը, որի ավարտին Անուշավան սրբազանը շնորհավորեց ամենքին՝ գրատան բացման առթիվ: Սրբազանն իր խոսքում մասնավորաբար նշեց. «Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Երեւանում բացվեց լուսավոր մի կենտրոն՝ գրքերի աշխարհ: Դժբախտաբար ժամանակի ընթացքում մեր հասարակության մեջ նվազել է ընթերցանությունը, գրատները վերածվել են այլ հաստատությունների: Նորին Սրբությունը, կարեւորելով ընթերցանությունն ու գիտելիքը, ցանկացավ, որ բացվի այս գրատունը, որպեսզի հայորդիները հնարավորություն ունենան ծանոթանալու մեր ժողովրդի եւ Եկեղեցու պատմությանը, հոգեւոր գրականությանն ու Եկեղեցու դավանաբանությանը»:

Խոսք ասացին նաեւ Տ. Տաթեւ արք. Սարգսյանը եւ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի գրասենյակի վարիչ Տ. Ղեւոնդ քհն. Մայիլյանը: «Գիրքը սրբություն է, որը կյանք է տալիս մարդուն, ազնվացնում ու կրթում է նրա հոգին, միտքն ու սիրտը: Հայ գիրքը հայ մարդու պատիվն է»,- նշեց Տաթեւ սրբազանը, իսկ Տ. Ղեւոնդ քահանան անդրադարձավ Մայր Աթոռի հրատարակչական բաժնի լայնածավալ գործունեությանը՝ նշելով, որ միայն վերջին հինգ տարում բաժինը հրատարակել է շուրջ երկու հարյուր միավոր պատմական, հայագիտական, եկեղեցագիտական, աստվածաբանական, մեկնողական, կրոնական-գեղարվեստական գրականություն:

Ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, տարբեր հրատարակչությունների ներկայացուցիչներ, Հայաստանի գրողների միության անդամներ եւ գիտության ու մշակույթի գործիչներ:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄՈՒՄ

## ՀԱՆՔԱՎԱՆԻ «ԼՈՒՍԱԲԱՑ» ՃԱՄԲԱՐՈՒՄ

Արմավիրի թեմի սոցիալապես անապահով ընտանիքների 9-13 տարեկան երեխաների ամառային հանգստի ծրագիրն այս տարի մեկնարկվեց հունիսի 1-ից եւ ավարտվեց օգոստոսի 3-ին: Թեմի առաջնորդ Տեր Սիոն եպս Ադամյանի օրհնությամբ, ծրագրի գլխավոր բարերար «Բաց Հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ»-ի հայկական մասնաճյուղի, ինչպես նաեւ աջակցությամբ ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի, բարերարներ Վահան Ավագյանի եւ Կարեն Հովհաննիսյանի, Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում իրականացվեց երկու հերթափոխով 113 երեխայի ամառային հանգիստը:

Ծրագրի շրջանակներում թեմի առաջնորդի նախագահությամբ կազմված հանձնաժողովը հանդիպումներ ունեցավ թեմի Աղավնատուն, Շահումյան, Մարգարա, Երասխահուն, Արգավանդ, Փշատավան, Քարակերտ համայնքների անապահով եւ զոհված ազատամարտիկների, ինչպես նաեւ Էջմիածնի եւ Մեծամորի Չանգակատուն ԲՀԿ-ի անապահով ընտանիքների երեխաների ծնողների հետ: Վերջիններս իրենց գոհունակությունը եւ շնորհակալությունը հայտնեցին նման նախաձեռնությանն աջակցող բոլոր կազմակերպություններին, որ իրենց երեխաները առիթ կունենան գտնվելու ճամբարում:

Հիմնական խնդիրն ու նպատակն էր հանգստի շրջանակներում ապահովել կարիքավոր երեխաներին լիարժեք սնունդով, նպաստել նրանց բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը, իրականացնել բազմաթիվ սոցիալական, կրթադաստիարակչական, հոգեւոր-մշակութային, մարզամշակութային միջոցառումներ:

Արմավիրի թեմում մի քանի տարիների ընթացքում կազմակերպված ճամբարների փորձը ցույց է տալիս, որ այդ կարճ ժամանակահատվածում երեխաները ստանում են բավարար դաստիարակություն, շփվում են իրենց հասակակիցների հետ՝ տարբեր շրջաններից, սովորում են ճիշտ սնվել, վարել առողջ ապրելակերպ, այցելում են պատմամշակութային վայրեր, սովորում են սիրել ու պահպանել շրջակա միջավայրը: Թեմի հոգեւոր սպասավորները ճամբարում երեխաներին ծանոթացնում են Հայ Եկեղեցու պատմությանը, սովորեցնում աղոթքներ, հոգեւոր երգեր, տալիս քրիստոնեական դաստիարակություն:

## ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԿՐՏՎԵՑ 50 ԵՐԵԽԱ

Թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի օրհնությամբ Հայաստանի մանուկների հիմնադրամի նախաձեռնությամբ եւ աջակցությամբ, ինչպես նաեւ աջակցությամբ Քարակերտի համայնքապետի, համայնքապետարանի սոցիալական բաժնի պատասխանատուի՝ օգոստոսի 7-ին Քարակերտ համայնքի համայնքային կենտրոնում տեղի ունեցավ 5 ամսականից մինչեւ 53 տարեկան անձանց մկրտության արարողություն:



Աստծո կամքով Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից այս գեղեցիկ նախաձեռնությունը շարունակական կդառնա, քանի որ այդ օրվա խորհուրդով չափազանց տպավորված էին համայնքի շատ ու շատ բնակիչներ:

## ՕԾՎԵՑԻՆ ՍԲ ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԵՐԸ ԵՎ ԽԱՉԸ

Արմավիրի թեմի Նոր Կեսարիա համայնքում եգիպտաբնակ Բարսեղ Վահանի Գզգզյանի բարերարությամբ 2009 թվականից կառուցվում է Սբ Բարսեղ Կեսարացի եկեղեցին, որը գրեթե մոտենում է իր ավարտին: Օգոստոսի 6-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի ձեռամբ կատարվեց նորակառույց եկեղեցու զանգերի եւ խաչի օծումը: Այժմ ընթանում են եկեղեցու բակի վերանորոգման աշխատանքները, որի ավարտից հետո՝ մոտ ապագայում, կկատարվի եկեղեցու օծումը:

# ՀՈՎԻՎՆ ՈՒ ԻՐ ՀՈՏԸ

## ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Ձեր անունից հարցերը Կյուրեղ քահանա Տալյանին է ուղղում մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա Խաչատրյանը:*

**- Սուրբ Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված իր թղթում ասում է. «Չկա իշխանություն, որ Աստծուց չլինի. եւ եղած իշխանությունները Աստծուց են կարգված: Հետեւաբար ով հակառակում է իշխանությանը, Աստծու հրամանին է հակառակում» (Հռոմ. ԺԳ 1): Տե՛ր հայր, արդյոք մի՞շտ պետք է հնազանդվել իշխանություններին:**

- Խիստ արդիական հարց է, որ հետաքրքրում է մեր շատ հավատացյալներին. մարդիկ չգիտեն՝ ինչպես վարվել, ինչպես արձագանքել անարդարությանը, մարդկանց հանդեպ գործադրվող բռնություններին: Եվ շատերը (հենց հավատացյալների միջից), խույս տալով իրենց բաժին պատասխանատվությունից, մատնացույց են անում իշխանություններին հնազանդվելու առաքելական պատգամը: Անշուշտ, իշխանություններն Աստծուց են կարգված, բայց այստեղ առաքյալը խոսում է քիչ թե շատ ընդունելի իշխանության մասին՝ ասելով, **որ նրանք խրախուսում են բարին եւ պատժում են չարը** (տե՛ս Հռոմ. ԺԳ 3): Իշխանության անելիքը երկրում կարգ ու կանոն հաստատելն է, ժողովրդի մասին հոգալը, սրտացավությունն ու հայրենասիրությունը, ինչը շատ դժվար է այսօր գտնել մեր երկրում: Առաքյալն ասում է. «Ուզո՞ւմ ես չվախենալ իշխանությունից. բարին գործիր եւ նրանից գովասանք կստանաս, որովհետեւ նա Աստծու պաշտոնյա է քեզ՝ բարի գործերի համար» (Հռոմ. ԺԳ 3-4): Հստակ է առաքելական խոսքը. եթե իշխանավորը, պաշտոնյան, ղեկավարն իսկապես արդար լինեն եւ եթե շատ խիստ էլ լինեն, մարդիկ կհարգեն ու ուրախությամբ կհնազանդվեն: Մենք սովոր ենք ասել, որ մեր ժողովուրդն օրենք չսիրող ժողովուրդ է: Եթե այդպես է, ապա ինչպե՞ս արագ սովորեցինք ամրագոտիներ կապել, օրինապահ կերպով հատել փողոցը: Մենք չենք ճանաչում մեր ժողովրդին: Եթե օրինապահությունը ներքին համոզմունք չէ, այլ արտաքին կաղապար, շատ շուտ փշրվում է: Աստված նայում է մեզ, մեր վարքագծին, վիճակին: Եթե մարդը որոշակի գումարի դիմաց քվեարկում է նրա օգտին, ով հետո իր գլխին չարիք պիտի դառնա, իրավունք չունի բողոքելու: Այդպիսի մեկը չի մտածում իր զավակների մասին: Չէ՞ որ այդ ընտրություններով երկրի, պետության ընթացքն է կերտվում, հետեւաբար Աստված թույլ է տալիս՝ ասելով. «Եթե այդպես եք ուզում, առեք ձեզ թագավոր»:

Մենք ապրում ենք ժողովրդավարական ժամանակներում: Ի դեպ՝ ժողովրդավարության առաջին ակնարկն Աստվածաշնչում է: Աստված ասում է Իր ժողովրդին. «Ձեր միջից ընտրեք իմաստուն, խոհեմ, շրջահայաց մարդկանց. նրանց ձեր գլխին իշխան կարգեք»: Ահա տեսնում ենք, որ Աստված տալիս է չափանիշներ, թե ինչպիսին պետք է լինի առաջնորդը: Իմաստությունն աստվածային շնորհ է, խոհեմությունը՝ մարդկային հատկանիշ, մտքի ինչ-որ երեւույթներ վերլուծելու ունակությունն է, շրջահայացությունը՝ հորիզոնական այս դաշտի վրա հարաբերվելն է մարդկանց հետ: Ահա իրական ժողովրդավարությունը որտեղ է: Մեր ժամանակներում ամեն բան գլուխն ի վայր է շուռ եկած...

Հնազանդությունը՝ հնազանդություն, սակայն եթե իշխանավորը, պաշտոնյան խրախուսում են մեղքը՝ ինձ էլ մղելով մեղք գործելու, հնազանդվելով՝ ես մասնակից եմ լինում նրա մեղքին: Այստեղ երկու կարծիք լինել չի կարող: Նույնիսկ խորհրդային ժամանակներում եղել են դեպքեր, երբ զինվորների մի փոքրիկ վաշտ հրաժարվել է կրակել իր ժողովրդի վրա: Նրանք քաջ գիտակցել են՝ ինչ են անում, գնդակահարվել են, սակայն դեմ չեն գնացել իրենց խղճին:



**- Փաստորեն այս դեպքում չհնազանդվելը մեղք չի դիտվում: Ավելին. հնազանդվելն է մեղք: Այդպե՞ս է:**

- Այո՛, այդպես է: Ընդհանրապես երկրի ղեկավարին պետք է ընտրել խոհեմությամբ, իսկ այս եւ նմանատիպ այլ հատկությունները մեր ժողովրդի միջից կարծես իսպառ վերացել են. յուրաքանչյուր ոք պետք է երկրին տեր լինելու զգացումն ունենա, իսկ եթե ես տեր եմ իմ երկրին, պետք է իմ կարողության չափով ջանամ օգտակար լինել: Անտարբերությունը մեծագույն չարիք է: Անտարբեր մարդը չի ուզում խառնվել, բայց ուզում է, որ ամեն ինչ առանց իր մասնակցության բարեփոխվի, լավանա, սակայն այդպես չի լինում: Յուրաքանչյուրինս գործն է մեր երկիրը, պետությունը կառուցելը: Մեր ժողովրդի մեծ մասը սպասում է, որ պիտի գա մի բարի թագավոր, ով մեզ «լավ կնայի»: Ավետարանում սրա նախատիպը կա: Հիշենք, թե ինչպես հրեաները հացի բազմացումից հետո փնտրում էին Քրիստոսին՝ Նրան թագավոր դարձնելու համար, որովհետեւ նյութական կերակրով հագեցան... Նրանք մտածում էին, որ Նրան թագավոր դարձնելով՝ իրենք չէին չարչարվի եւ միշտ կուշտ կլինեին: Ահա մեր ընկալումն էլ այսպիսին է, եւ դա շատ տխուր է: Օրինակ՝ հրեաներն այդպիսին չեն. նրանք գիտեն, որ իրենցից յուրաքանչյուրը պետք է իր քարը դնի պետության կայացման գործում: Նրանք այդպես են դաստիարակվել:

**- Գիտենք, որ «պաշտոնյա» բառը գրաբարից թարգմանաբար նշանակում է ծառա, ուստի ղեկավարի, պաշտոնյայի կոչումը մարդկանց ծառայելն է: Ըստ ձեզ՝ այսօր որեւէ պաշտոնյա կարո՞ղ է ընկալել սա:**

- Այո՛, իշխանավորը պարտավոր է ծառայել ժողովրդին: Ցավոք, այսօր որեւէ պաշտոնյա չի կարող ընկալել այդ, սակայն ես ճանաչում եմ գյուղապետների, որոնք իսկապես ծառայում են գյուղի ժողովրդին: Այսինքն՝ իշխանությունը նրանց համար արտոնությունների մի տրցակ ունենալն ու վայելելը չէ, նրանք սեփական գրպանը լցնելու մասին չեն մտածում, այլ՝ ժողովրդին ծառայելու:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ
## (1691-1705)

Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի մահվանը հաջորդեցին մեծ շփոթներ՝ կապված կաթողիկոսության խնդրի հետ: Պատճառը հայտնի եւ կրոնամոլ լատին աբեղաների գործունեությունն էր: Սրանք նյութապես հարուստ էին, քաղաքականապես՝ պաշտպանված եւ ուժեղ, հանդուգն՝ ձեռներեցության մեջ, եւ փորձում էին մուտք գործել մի չարչարյալ ժողովրդի մեջ, որը գտնվում էր գերության եւ տգիտության ճիրաններում: Ոսկու հրապույրով, եվրոպական կրթության առվելություններով եւ ազդացիկ պաշտպանությամբ նրանց հաջողվում էր իրենց ցանցը գցել տկար հոգիներին, որոնք պատրաստ էին դրանց դիմաց զոհել իրենց ուղղափառ հավատը: Եվ, իրոք, նրանց հետեւողների խմբակ ձեւավորվեց, սակայն եվրոպացի ականատեսների վկայությամբ՝ այդ գործունեությունը, չնայած մեծ ծավալներին, արդյունավետ չէր: Բայց եւ այնպես այդ փոքր խմբակն անգամ դառնում էր օտար միջամտությունների աղբյուր եւ խանգարում ազգի անդորրը, տարածում շփոթներ ու ներքին երկպառակություններ: Կաթոլիկ քարոզիչների չափն անցնելը նկատել էր եվրոպական մի դեսպան եւ մեղադրել նրանց: Այդ շփոթին մեծապես նպաստում էին օտար դպրոցների հայազգի աշակերտները, դավանանքով տկարացած հոգեւորականները եւ անգամ հայ իշխանավորները: Փորձում էին հայերին հեռացնել Հայոց եկեղեցուց, եւ դա հատկապես կատարվում էր Կոստանդնուպոլսում:

Լատին քարոզիչներն այլ ձեւով էին գործում հայկական գավառներում եւ անգամ Մայր Աթոռում: Նրանք Նահապետ կաթողիկոսից իրավունք ստացան՝ քարոզելու հայոց եկեղեցիներում: Նահապետը մեղադրվում է լատինների հետ սերտ հարաբերություններ ունենալու մեջ՝ միջնորդությամբ ճիզվիտների կամ հիսուսականների միաբանության, որի ներկայացուցիչները գլխավորապես գործում էին հայոց գավառներում, որտեղ ավելի վաղ հաստատված դոմինիկյանները խիստ տկարացել էին:

Նրանց մնացորդներն էին Երնջակի ունիթորները: Ըստ Մ. Չամչյանի՝ ճիզվիտները պատիվ ու ընդունելություն գտան Նահապետի կողմից եւ իբր մեծ վիշտ պատճառեցին նրան՝ ասելով, թե Արեւմուտքում լուրեր են տարածվում, թե հայերը հետ են կանգնել Հռոմին հպատակվելուց: Կարծես թե հայերն առաջ Հռոմին են ենթարկվել, որ այժմ էլ հետ կանգնեին: Բանը հասնում է այնտեղ, որ Նահապետ կաթողիկոսը հայերին այդ մեղադրանքից ազատելու համար, իբր, 1695 սեպտեմբերի 5-ին «սիրոյ եւ յարգութեան» նամակ է ուղարկում Ինոկենտիոս ԺԲ պապին: Իրականում նա այդ թվականին կաթողիկոսությունից զրկվել էր եւ աթոռից հեռացել: Այդ նամակի պահպանված պատճենում եւ թարգմանության մեջ հպատակության մասին անգամ խոսք չկա, չնայած նամակը հեղեղված է արեւելյան չափազանցություններով: Խոսքն ընդամենը վերաբերում է Հռոմի պապից նյութական օգնություն եւ քաղաքական պաշտպանություն խնդրելուն: Հանուն դրա՝ արվում են շողոքորթ մարդահաճություններ: Նահապետ կաթողիկոսը բոլորովին միտք չուներ զիջումներ կատարելու դավանական հարցերում: Զաքարիա Քանաքեռցին, որ Նահապետ կաթողիկոսի ժամանակակիցն է եւ չի քաշվում նրա թերությունները նշելուց, բոլորովին տեղյակ չէ նրա՝ հռոմեադավանությանը հարելուց կամ պապին նամակ գրելուց: Այդ նամակը Նապահետի անպաշտոն, անձնական ու գաղտնի մի ձեռնարկ է, որը ոչ մի արժեք չունի՝ Հայոց եկեղեցու տեսակետից:



Նահապետ կաթողիկոսի դեմ դժգոհությունները գնալով աճում էին՝ կապված նրա սաստիկ բնավորության հետ, ինչը հավաստում են Զաքարիա Քանաքեռցին եւ Ջուղայեցին: Հասկանալի է, որ նա ինչքան էլ անաչառ լիներ, խստություններ կիրառելիս կարող էր եւ կամայականություններ գործել, ինչպես նաեւ ազդվել քսու մարդկանցից: Ուստի կաթողիկոսից սկսեցին դժգոհել Մայր Աթոռի միաբանները եւ այլ հոգեւորականներ, որոնք միավորվեցին նրա դեմ՝ կամենալով նրան գահընկեց անել: Բողոքավորների գլուխ կանգնեցին Նախիջեւանի եւ Գողթնի եպիսկոպոսները, որոնց անունները պատմությունը չի պահպանել: Այդ գործում նշանակալից էին պարսից իշխանությունների վերաբերմունքը եւ Նոր Ջուղայի հայ իշխանավորների դիրքորոշումը: Տեղացի հոգեւորականներին դուր չէր գալիս օսմանահպատակ Նահապետի՝ իրենց վրա իշխելը: Զաքարիա Քանաքեռցին, որ բոլորովին էլ Նահապետի համակիրներից չէ, մտածում է նույն ձեւով, որ պետք է հետ վերադարձնել Մայր Աթոռը տեղի հոգեւորականներին: Կաթողիկոսի եւ թեմական կամ վանական առաջնորդների միջեւ անհամաձայնություններ ի հայտ եկան, եւ պարզ դարձավ, որ պարսկահայ եպիսկոպոսների համար տաճկահայ կաթողիկոսը հաճելի չէր: Չի բացառվում, որ Նահապետ կաթողիկոսի՝ լատինների հետ ունեցած գաղտնի հարաբերություններն ու նամակագրությունն էլ ի հայտ եկան եւ ավելի բորբոքեցին հակառակորդներին: Հավանաբար սա եւս որպես մեղադրանք օգտագործվեց, չնայած կարծես թե միաբաններն այդպիսի կարծիք չեն ունեցել: Համենայն դեպս, հայ հոգեւորականությունը նման կապերի մեջ մասնակցություն չի ունեցել, եւ եղածը կաթողիկոսի անհատական եւ գաղտնի ձեռնարկն էր:

Ընդդիմադիրների գլուխ կանգնեցին Նախիջեւանի եւ Գողթնի եպիսկոպոսները, որոնք ամբաստանագրեր պատրաստեցին Նահապետի դեմ եւ համակիրների ստորագրություններն ստանալով՝ այդ ամբաստանագրերն ուղարկեցին ջուղայեցիներին, որպեսզի սրանք իրենց միանան՝ Նահապետին տապալելու գործում:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
## (1897-1937)

*Եղիշե Չարենցը հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչներից է: Իր բացառիկ ծիրքով նա ի մի բերեց այն դարավոր ճանապարհը, որ հայ հոգեւոր կյանքն անցել էր Մաշտոցից ու Խորենացուց մինչեւ Թումանյան ու Տերյան: Ստեղծագործական ուղղվածությամբ, ընդգրկումների հարստությամբ, գրականության զարգացման ու առաջընթացի հզոր թափով Չարենցը դարձավ այն ուղենշային դեմքը, որով սկսվում է հայ գրականության նորագույն շրջանը:*

### ԿՅԱՆՔԸ

Եղիշե Չարենցը (Սողոմոնյան) ծնվել է 1897 թ. մարտի 13-ին Կարս քաղաքում: Նրա ծնողները՝ գորգավաճառ Աբգար Սողոմոնյանը եւ Թեկղի Միրզոյանը, Կարս էին գաղթել Մակու քաղաքից: Դա է պատճառը, որ ծննդավայրի մասին Չարենցը նաեւ այսպիսի վկայություններ է թողել. *«Ես եկել եմ հեռո՜ւ Իրանից: Հայրենիքս է-Խանի Մակուն»*, այնուհետեւ՝ *«Եղիշե Չարենց, բանաստեղծ՝ ծնված Մակու քաղաքում»*: Սողոմոնյանների ընտանիքում մեծանում էին չորս տղա եւ երեք աղջիկ: Գրաճանաչությունն երեխաները սովորում էին տանը, որն ապրում էր ավանդական հայ ընտանիքի բարեպաշտությամբ: Ապագա բանաստեղծը հետեւողական կրթություն չի ստացել. 1908-1912 թթ. սովորել է Կարսի ռեալական ուսումնարանում եւ հեռացվել՝ ուսման վարձը վճարել չկարողանալու պատճառով: Գիտելիքների պակասը նա լրացրել է կյանքի համալսարաններում եւ ընթերցանությամբ. կարդում է հայ եւ համաշխարհային գրականության դասականներին, որոնցից ստացած ազդակներն էլ բորբոքել են նրա երեւակայությունը:

1912 թ. Թիֆլիսի «Պատանի» ամսանախում Եղիշե Սողոմոնյան ստորագրությամբ տպագրվում է «Ծաղիկները հեզ...» բանաստեղծությունը, իսկ 1914-ին արդեն Եղիշե Չարենց ստորագրությամբ լույս է տեսնում 17-ամյա պատանու գիրքը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան»: Առաջին գիրքն առաջին սիրո ծնունդ էր՝ նվիրված Աստղիկ Ղոնդախչյանին, եւ ընդգրկում էր մեկը մյուսին շարունակող երեք բանաստեղծություն:

Հաջորդ տարի՝ 1915-ին, լույս է տեսնում «Կապուտաչյա հայրենիք» պոեմը:



Ասպարեզ է իջնում բանաստեղծը, բայց նրա արտասովոր ազգանունը դեռեւս անծանոթ էր ընթերցողին: Որտեղի՞ց էր բանաստեղծը վերցրել շատ ազդեցիկ Չարենց կեղծանունը: Ինքը հետագայում պատմել է, թե իրենց քաղաք է եկել Չարենց ազգանունով մի բժիշկ, ում բնակարանի ցուցատախտակի վրայի «Չարենց» մակագրությունն էլ ընդօրինակել է: Պատանեկան տարիների մտերիմներն այլ բացատրություն են տալիս. Չարենց է վերամկրտվել, որովհետեւ մանկուց եղել է չար ու աշխույժ երեխա: Նրան այնքան են *չա՛ր*, *չա՛ր* ասել, որ Չարենց էլ մնացել է: Ըստ մեկ այլ վկայության՝ մտորելով իր գրական անվան մասին՝ բանաստեղծը հնչյունական եւ իմաստային տեղաշարժերի է ենթարկել Պուշկինի «Անչար» բանաստեղծությունը, ինչից էլ ստացվել է Չարենց: 1921-ից Չարենց գրական անունը նրա համար դառնում է նաեւ քաղաքացիական ազգանուն: Չարենց անվան ընտրությանը բանաստեղծն ավելի ուշ տվել է տրամաբանական այսպիսի բացատրություն. աշխարհում բարու դիմակի տակ շատ հաճախ չարն է թաքնված, ինքը որոշել է հակառակն անել. *«Ես իմ հոգու բարի բովանդակությանը, այսպես ասած, չար անուն եմ տվել»*: Այս հակադրությունն ունի հոգեբանական եւ փիլիսոփայական բացատրություն:

Բանաստեղծ Չարենցն արդեն ազդարարել էր իր գրական մուտքը, իսկ նրան նկատողներ դեռեւս չկային: Սկսվել էր Առաջին աշխարհամարտը, որն իր բոցերի մեջ էր առել նաեւ Հայաստանը: Չարենցի համար այլեւս երկընտրանքի ուղի չկար: 1915-ին նա միանում է հայկական կամավորական 6-րդ խմբին եւ հասնում մինչեւ Վան: Կապուտաչյա հայրենիքի որոնման առասպելը նրա աչքերի առջեւ վերածվում է դժոխքի, եւ հենց պատերազմի դաշտում հեղվող արյան, նահատակության ու հերոսական սխրագործությունների տպավորություններով էլ շարադրում է «Դանթեական առասպել» պոեմը, որը 1916-ին լույս է տեսնում Թիֆլիսում:

Այդ օրերին էլ մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու Շանյավսկու համալսարանում, եւ մնում մինչեւ 1917 թ. գարուն: Կյանքը դուրս էր եկել ափերից, եւ Չարենցն այդ հորդուն տարերքի մեջ էր, որի պարգեւած հոգեկան ապրումների, ներանձնական զգացողությունների արգասիքն էլ դառնում է «Ծիածանը» վերնագրված հաջորդ գիրքը (Մոսկվա, 1917): Այս տարիներին Չարենցը նաեւ գրում է հոգեբանական խոր դրամատիզմով ներծծված «Լիրիկական բալլադները», հայրենիքի ողբերգական կերպարը մարմնավորող «Վահագն», «Աթիլլա», «Ազգային երազ», «Հատված» պոեմները:

Շառաչում էր հանրային կյանքի ահեղ օվկիանոսը: Չարենցը վերափոխվող կյանքի հորձանուտում էր: Այդ վերափոխումների մեջ էլ նա պատասխան է որոնում իր երկրի բախտի, անկայուն տարուբերումների մատնված մարդկային ճակատագրերի համար: Հոգեբանական այս վիճակը նաեւ ստեղծագործական վիճակ էր, որի արդյունքն են 1918-1920 թթ. գրած «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմները եւ «Ողջակիզվող կրակ» շարքը:

Այս մեծ հեղաբեկումների մեջ դժվարին երկունքով ծնվում է Հայաստանի Հանրապետությունը, վերականգնվում է ազգային պետականությունը: Չարենցն իր հայրենիքի զինվորն էր եւ նրա ուրախ ու տխուր օրերի երգիչը: Իսկ այդ օրերին՝ նաեւ նրա ուսուցիչը: Հայրենիքին պիտանի լինելու մղումով 1919-ի աշնանը նա ուսուցչություն է անում Կարսի մարզի Բաշքյադիկլար գյուղի դպրոցում:

Բայց նա հայրենիքին ծառայելու այլ կոչում ուներ՝ ի վերուստ տրված բանաստեղծի շնորհը: Ժամանակակիցներն աստիճանաբար նկատում եւ գնահատում են նրա ծիրքը:

«Դանթեական առասպելի» մասին «Մշակում» իր խոսքն է ասում Գարեգին Լեւոնյանը, «Սոման» գրախոսում է Հարություն Սուրխաթյանը: Բայց Չարենցի անունը նրան արժանի բարձր գնահատանքով հնչեցնելու պատիվը վիճակված էր խոշորագույն քննադատ, Հայաստանի Հանրապետության կրթության եւ արվեստների նախարար Նիկոլ Աղբալյանին, որն էլ Հայ գրական ընկերության անդրանիկ նիստերից մեկը 1919 թ. հոկտեմբերի 18-ին նվիրեց Չարենցի ստեղծագործությանը:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
## (1897-1937)

*Սկիզբը՝ էջ 3*

Բանաստեղծը թեեւ ներկա չէր երեկոյին, բայց տեղեկացավ գրական այդ իրադարձության մասին եւ հետագայում «Չարենց-նամե» պոեմում գրեց. *«Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս, // Երբ մի լուրջ քննադատ մի օր // Սարսելով դահլիճն ու փոյեն - // Ավետեց ամբողջ աշխարհին, // Որ ծնվել է - մեծ մի պոետ...»:*

Կարճ ժամանակ անց՝ 1920 թ. հունվարմայիս ամիսներին, Աղբալյանին ներկայացած բանաստեղծն աշխատանքի է նշանակվել Աղբալյանի ղեկավարած նախարարությունում՝ որպես հատուկ հանձնարարությունների կոմիսար: Դրանից հետո՝ 1920-1921 թթ., Չարենցին վերստին տեսնում ենք ուսուցչի պաշտոնում: Այս բարդ ու հարափոփոխ ժամանակների ծնունդ են նրա «Նաիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թեւերը կարմիր գալիքի» ռադիոպոեմները՝ գրված 1920-ին:



1920 թ. նոյեմբերին՝ Հայաստանի խորհրդայնացումից հետո, լուսավորության ժողովրդական կոմիսարիատում նա ստանձնում է արվեստի բաժնի վարիչի պաշտոն եւ աշխատում մինչեւ 1921 թ. մայիսը: 1920-ական թթ. առաջին տարիները եւս բուռն շրջան են նրա թե՛ գրական, թե՛ անձնական կյանքում: Մեկը մյուսի ետեւից գրում է «Էմալե պրոֆիլը Ձեր», «Փողոցային պչրուհուն», «Տաղարան», «Ութնյակներ արեւին» շարքերը, «Ամենապոեմը», «Չարենց-նամե» պոեմը, շարադրում «Երկիր Նաիրի» վեպը:

Գրական կյանքի արտակարգ բովանդակալից ճանապարհ անցած բանաստեղծն ընդամենը 24-25 տարեկան էր: Հայրական տնից հեռանալուց հետո նա ճաշակել էր քամու բերանն ընկած սերնդին վիճակված ամբողջ դառնությունը: Մի պահ նա կարծես ուզում է դադար առնել այդ հոգնաբեկ վազքից եւ կարգավորել անձնական կյանքը:

1921 թ. մայիսին ամուսնանում է Արփիկ Տեր-Աստվածատրյանի հետ, ում հանդեպ տածում էր անսահման սեր ու գորով եւ ում հետագայում պիտի կոչեր *«հերոսական կին եւ բարեկամ»*: Արփիկի հետ էլ նա մեկնում է Մոսկվա՝ Արեւելքի աշխատավորների համալսարանում լրացնելու կրթության պակասը: Սակայն նրա անհանգիստ ոգին չէր կարող տեղավորվել ուսանողական նստարանին: Կյանքը հոսում էր, գրական գործը՝ եռում: 1922-ին եւս մի փորձ է կատարում Մոսկվայում ուսանելու համար՝ այս անգամ աչքի առջեւ ունենալով պետական համալսարանի հասարակական գիտությունների բաժանմունքը եւ ապա Բրյուսովի ղեկավարած բարձրագույն գրական-գեղարվեստական ինստիտուտը: Բանաստեղծին այդպես էլ վիճակված չէր ուսանողի առօրյան:

1922-ին Մոսկվայում նա լույս է ընծայում իր երկերի երկհատոր մեծադիր ժողովածուն, որ ինքնին երեւույթ էր այդ տարիների հայ կյանքում:

Այս օրերին էլ Չարենցն ասպարեզ է նետվում՝ որպես արվեստի մի նոր պատգամախոս: 1922 թ. «Երեքի» դեկլարացիայից հետո նա փաստորեն դառնում է նորագույն շրջանի հայ գրականության առաջնորդը: 1922-1924 թթ. Չարենցի նոր որոնումների շրջանն է. ստեղծվում են «Պոեզոզուռնա», «Կոմալմանախ» ժողովածուները, «Ռոմանս անսեր» պոեմը, «Ասպետական» ռապսոդիան, «Կապկազ» թամաշան:

Աշխարհաճանաչողությունն ընդարձակելու նպատակով՝ 1924 թ. նոյեմբերի 20-ին Բաթումից Չարենցը մեկնում է արտասահմանյան շրջագայության: Լինում է Տրապիզոնում, Կոստանդնուպոլսում, Աթենքում, Հռոմում, Վենետիկում, Փարիզում, Բեռլինում:

Եվրոպական բարձր քաղաքակրթությունը, համաշխարհային արվեստը նրա մեջ կատարում են գաղափարագեղագիտական լուրջ տեղաշարժեր, որոնք եւ նպաստում են հաղթահարելու նոր որոնումների շեղումները եւ ընտրելու արվեստի դասական ուղին:

1925 թ. հուլիսի 31-ին վերադառնալով Երեւան՝ նա ստանձնում է նոր կազմավորված գրական ուժերի ղեկավարությունը, ձեւավորված խմբակցությունն անվանակոչում «Նոյեմբեր» եւ ազգային գաղափարախոսությամբ փորձում գրականությունը փրկել պրոլետգրողների ապազգային գործունեությունից: Սրվում եւ ավելի անհանդուրժողական են դառնում հարաբերություններն ազգային եւ պրոլետարական գրողների միջեւ, եւ ծայր է առնում մի տեւական գրապայքար՝ ուղղված բոլոր նրանց դեմ, ովքեր պաշտպանում էին ազգային շահերը: Չարենցն ու համախոհներն այդուհետեւ հայտնվում են գաղափարական եւ քաղաքական հալածանքների մեջ եւ դառնում իշխող վարչակարգի դեմ ուղղված մտավոր ընդդիմությունը գլխավորող ուժ:

Այս պայքարի բովում ծնվում են Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմը (1929), «Էպիքական լուսաբաց» (1930), «Գիրք ճանապարհի» (1934) ժողովածուները, որոնք դառնում են այդ տասնամյակների գլխավոր եւ ուղենիշ գրքերը:

Բռնկուն եւ ազատ տարերքի ստեղծագործող էր Չարենցը: Այդ տարերքը երկնում էր հանճարեղ գործեր: Բայց այդ տարերքի բռնկումը հաճախ ուղղվել է իր դեմ, որովհետեւ նրա հոգեւոր ազատությունը հասու չէր շրջապատին: Հոգեկան այս լարված կացության մեջ սիրային մի արկած Չարենցի համար ունենում է տխուր վերջաբան: 1926 թ. սեպտեմբերի 5-ին նա ձերբակալվում է եւ հայտնվում Երեւանի ուղղիչ տանը: Այդ արկածից որպես հիշատակ մնում է «Երեւանի ուղղիչ տնից» հուշակնարկը:

1927 թ. սկզբին մահանում է Չարենցի կինը: Հուսահատության գիրկն ընկած բանաստեղծն ապրում է հոգեկան ծանր տվայտանքների դժվարին ժամանակներ:

Ի հեճուկս հակառակորդների՝ Չարենցն արագ հաղթահարում է իրեն պաշարած հոգեբանական ճգնաժամը: 1928-ի հուլիսից ստանձնում է պետական հրատարակչության գեղարվեստական ենթաբաժնի աշխատակցի, 1930-ի հունիսից՝ բաժնի վարիչի, 1934-ի ապրիլից՝ դասականների հրատարակության պատասխանատու խմբագրի պարտականությունները: Չարենցի գործունեության շնորհիվ 1928-1935 թթ. դառնում են հայ գրահրատարակչության լավագույն տարիները:

1931-ին ամուսնանում է Իզաբելա Կոդաբաշյանի հետ, որը նրան պարգեւում է երկու դուստր: 1932 թ. լրանում է Չարենցի գրական գործունեության 20-ամյակը: Գրողների միությունը որոշում է նշել այդ հոբելյանը, ինչն այդպես էլ չի նշվում: Միակ հիշատակը մնացել է «Երկերի» մեծադիր հատորյակի հրատարակությունը, որի վրա նա հետո ձեռագրով ավելացրել է դառնության ու հիասթափության տողեր:

Այս ընթացքում գրական կյանքում ավելի են սրվում հակասությունները: Իր համախոհների՝ Բակունցի, Մահարու, Արմենի հետ նա շարունակում է պաշտպանել գրականության ազգային առանձնահատկությունները, իսկ հակառակորդները՝ Չարյանը, Վշտունին եւ ուրիշներ, ամեն առիթով հալածում էին նրան: Այս պայմաններում 1933-ին ձախողվում է նրա «Գիրք ճանապարհի» ժողովածուի տպագրությունը: Գիրքը, բովանդակության փոփոխությունից հետո միայն, լույս է տեսնում մեկ տարի ուշացումով: Դրանով հանդերձ՝ «Գիրք ճանապարհի»-ի տպագրությունը ոչ միայն Չարենցի, այլեւ ժամանակի ամբողջ գրականության մեծագույն հաղթանակն էր: 1934-ին Չարենցը մասնակցում է Հայաստանի եւ ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարին, հանդես գալիս ելույթներով եւ պաշտպանում համադրական բարձր արվեստի շահերը:

1935-ից սկսած՝ Չարենցի դեմ ուղղված հալածանքներն ավելի են խորանում: Նրան հեռացնում են հրատարակչությունից եւ գրողների միությունից: Նա արդեն մեկուսացված էր գրական կյանքից: Խորացող հիվանդություններն ու անառողջ հարաբերությունները նրան ստիպում են փակվել տանը: 1936 թ. սեպտեմբերի 24-ից Չարենցը ենթարկվում է տնային կալանքի, նույն վիճակը նրան վերջնականապես պարտադրվում է նոյեմբերի 9-ին: Ձախողվում է բուժման նպատակով արտասահման մեկնելու ծրագիրը: Փոխարենը՝ 1937 թ. ապրիլին Հայաստանի գրողների ընդհանուր ժողովը նրան ենթարկում է խիստ քննադատության եւ հռչակում «ժողովրդի թշնամի»:

*Շարունակությունը՝ էջ 6*

---

*Սկիզբը՝ էջ 3*

Ըստ որում, կամենում էին կաթողիկոսության աթոռ բարձրացնել Ստեփանոս Ջուղայեցուն, որը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդն էր ու պարսկահայերի արքեպիսկոպոսը, որն ուրացող Յոհան աբեղայի ձեռքով բանտարկության եւ չարչարանքների ենթարկվեց: Նամակները Նոր Ջուղա տարավ Մատթեոս Կարնեցի վարդարպետը՝ Բատրադեն մականունով: Նա պետք է բանավոր եւս հորդորեր Ստեփանոս Ջուղայեցուն եւ խնդրեր ջուղայեցիներին, որ նրանք այդ գործը դյուրացնեն: Առաքելությունը հաջողվեց, եւ Ստեփանոսը, մեծ ծախսեր անելով եւ միջոցներ մեջտեղ գցելով, ձեռք է բերում կաթողիկոս դառնալու՝ արքունի ռազամը կամ հրովարտակը: Իր՝ Էջմիածին գալուց առաջ նա ուղարկում է Ալեքսանդր Ջուղայեցի վարդապետին, որը Դավիթ Ջուղայեցու առաջադեմ աշակերտներից էր: Մինչեւ Ստեփանոսի տեղ հասնելը նա պետք է Նահապետին վտարեր, բանտարկեր Տաթեւի վանքում եւ իր վրա վերցներ, որպես տեղապահ, վանքի կառավարումը: Նահապետը հասկացավ, որ տեղում ոչինչ անել չի կարողանա, առավել եւս որ վանքի միաբանները նրա դեմ էին, ուստի ձեւ անելով, թե մեկնում է Տաթեւ, ուղեւորվեց Թավրիզ, որտեղ գտնվում էր Հուսեյն շահը: Այստեղ նա ապավինեց Շահօջախի կոչված վայրին, որը ծառայում էր որպես ապաստանատեղի, եւ եթե անգամ մահապարտն էր մուտք գործում այնտեղ, դառնում էր ոչ պատժելի: Պաշտոնանկ Նահապետը վախենում էր, անշուշտ, որ իրեն, որպես մղավորի, կարող են պատժել:

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ
## ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ
## (1691-1705)



Իսկ Ստեփանոսն արքունի հրովարտակով Ֆարզալի խանի հետ եկավ Երեւան եւ այնուհետեւ Էջմիածին եւ տիրացավ աթոռին կարճ ժամանակով՝ շուրջ տասն ամիս: Նա կաթողիկոսական աթոռ բարձրացավ 1695-ին եւ աթոռակալեց եւս մի քանի ամիս 1696-ին:

Սակայն Նահապետը եւս կողմնակիցներ ուներ, եւ ինքն էլ իրեն պաշտպանել կարող էր: Նրա բարեկամներից հատկապես եռանդուն գործեց Ավետիս Ջուղայեցի գյուղավագը, որը կարողացավ Հուսեյն շահին թախանձելով՝ Նահապետին օգնել: Նա Հուսեյնի ճնշման տակ դավանափոխ էր եղել եւ անգամ իր երկու դստրերին տվել էր շահի հարեմին, ուստի մեծ համարում ուներ Հուսեյնի մոտ: Չնայած նա ստացել էր Մուհամմադ Հուսեյն անունը, սակայն իր էությամբ չէ, որ իսլամացել էր, ուստի աշխատում էր զբաղվել հայերի խնդիրներով՝ դրանց դրական լուծում տալու համար: Նա ցույց տվեց Ստեփանոսի ստացած հրովարտակի ապօրինությունը, քանի որ հակառակ էր հայկական օրենքներին, որովհետեւ չէր կարելի կաթողիկոսին գահընկեց անել, եթե նա չէր հրաժարվել, եւ չէր կարելի փոխարինել նրան, եթե նա չէր մահացել: Ավետիսն այնքան հմուտ ներկայացրեց մեղադրանքները, որ Հուսեյն շահը հրամայեց Ստեփանոսից 1000 թուման բռնագանձել եւ նրան՝ իր համախոհների հետ, բանտարկել: Գործը հանձնարարվեց Երեւանի խան Ֆարզալիին, որն Ստեփանոսին բարձրացրել էր կաթողիկոսական աթոռ: Տուգանքը գանձվեց, Ստեփանոսն իր երեք համախոհների՝ Պետրոս Վայոցձորցի, Գրիգոր Մուղնեցի եւ Հովհաննես Ծաղկունացի առաջնորդների հետ բանտ նետվեց: Դրանից հետո Նահապետը հաղթական վերադարձավ Էջմիածին: Միաբանությունը չդիմադրեց ու լռեց, որը, թերեւս, հավաստում է, որ միաբանները գոհ չէին նաեւ Ստեփանոս Ջուղայեցուց:

Ստեփանոսի գործակիցներն առանց դժվարության, մեծ տուգանք մուծելով, շուտով ազատ արձակվեցին: Սակայն Ստեփանոսը չազատվեց եւ անգամ մթին ու մահահոտ զնդանը նետվեց: Նրանից կարծրանյութ քարեր կապեցին, իսկ ոտքերը կոճղի մեջ դրին, եւ շատ չանցած՝ նա մահացավ: Հարկ է նշել, որ Ստեփանոսը բոլորովին արժանի չէր նման վախճանի: Եվ դժվար է ասել՝ նա թագավորի՞ զայրույթի զոհը դարձավ, թե՞ Նահապետ կաթողիկոսի ոխակալության: Ստեփանոսը մահացավ 1698 թ. հունվարի 4-ին կամ ավելի ճիշտ՝ հունվարի 5-ին՝ չորեքշաբթի՝ Աստվածհայտնության ճրագալույցին: Չնայած տեղեկություն կա, թե նա մահացել է 1696 թ. փետրվարի 16-ին, որը, անշուշտ, շփոթ է՝ կապված նրա գահընկեցության թվականի հետ: Ըստ այդմ էլ՝ նա չէր կարող 1605 թ. սեպտեմբերի 5-ին, որպես կաթողիկոս, պապին նամակ գրել: Նրա մարմինը, իր իսկ կամքով, հողին հանձնեցին Խորվիրապի վանքում՝ Նահապետ կաթողիկոսի հոգածությամբ: Վերջինս մեծ ծախսեր արեց՝ Ստեփանոսի դիակը զնդանից դուրս բերելու եւ մարմինը հանդիսավորությամբ հողին հանձնելու համար, ինչը, թերեւս, հավաստում է նրա ոչ ոխակալ լինելը եւ Ստեփանոսի՝ Հուսեյն շահի զայրույթի զոհ դառնալը:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնում (2011 թ.)*

Ներսես վրդ. Մելիք-Թանգեան

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

(առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Ա. Բոզոյանի)

Ներսես արք. Մելիք-Թանգյանի վերոհիշյալ աշխատությունը, որն առայժմ միակ հրատարակված գործն է հայկական կանոնագիտական գրականության մեջ, նախատեսված է Հայոց եկեղեցու բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման համար: Կարեւոր այս ձեռնարկը հրատարակվել է ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի «Ջգոն եպս Տեր-Հակոբյան հիմնադրամի» կողմից:




## ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ

(հատված գրքից)

### 1) ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԻՐԱՒՈՒՆՔ

*Նախքան եկեղեցական իրաւունքի որոշման եւ պարզաբանութեան անցնելը, առաջ տեսնենք՝ ի՞նչ է եկեղեցի, ի՞նչ հիմունքներ ունի, ի՞նչ է իրաւունք եւ ի՞նչ կապ ունի եկեղեցու հետ:*

*Եկեղեցու հիմնադիրը՝ Յիսուս Քրիստոս, Իւր հանրամարդկային քարոզներով եւ անձնական օրինակով ցոյց տուեց մարդկանց, թէ ինչպէս պիտի հասնել հաւասարութեան, եղբայրասիրութեան եւ անձնական կատարելութեան բարձր գաղափարներին: «Սիրեցէ՛ք միմեանց» բազմիմաստ պատուէրով հարուածեց մարդկանց մէջ խոր արմատ ձգած այն հասարակական անհաւասարութիւնը եւ խորդուբորդութիւնը, որոնք դարերի ընթացքում օրէնք էին դարձել եւ մարդկանց մեծամասնութիւնը ստրուկ եւ հլու կամակատար արել ուժեղների ճիրաններում: Յանուն այդ բարձր սիրոյ դատափետեց այն անհարթութիւնները եւ անարդար խոչերը, որոնք դարերի ընթացքում խոր անդունդ էին բաց արել ժողովրդի եւ ազգերի զանազան խաւերի մէջ՝ ցոյց տալով, որ միայն այդ ընդհանուր սէրը կարող է եղբայրացնել տիրոջը եւ ծառային, բռնակալին եւ ստրկին:*

*Այդպիսի բարձր սիրոյ քարոզը յետ մղեց ազգայնական՝ ցեղական եւ այլ մանր՝ մարդկանց միմեանցից անջատող նշանները, առաջ կոչեց մեծ, ընդհանուր գաղափար՝ մարդկայնութիւն: Սիրի՛ր մարդուն, ով կուզէ լինի, ինչ ազգութեան կամենայ պատկանի, ինչ դրութեան մէջ լինում է լինի, սիրի՛ր նրան իբրեւ քո անձը: Այդ գաղափարով կեանքի հակառակ ծայրերը միացրեց, աշխարհը դարձրեց մի տուն, մի ընտանիք: Համամարդկային բարձր գաղափարներին եւ մտադրած վեհ նպատակին հասնելու համար Յիսուս ցոյց է տալիս միակ ճանապարհը, այն է՝ ինքնատիրութեան եւ անձնական կատարելութեան. «Եղերուք կատարեալ, որպէս Հայրն ձեր երկնաւոր» [Մատթ. Ե:48]: Այդպիսի կատարելութիւն ձեռք բերելու համար պէտք է մարդ անձնատիրութեամբ, ինքնաքննութեամբ կարողանայ կազմել մի այնպիսի բարոյական ուժեղ բնաւորութիւն, որի առաջ խոնարհուեն բոլոր եսական, նեղ կրքերը եւ հակումները, եւ մարդու բոլոր գործողութիւնները ենթարկուեն նրա անաչառ դատաստանին եւ վճռին: Ահա այդպիսի հաւասարակշիռ բնաւորութիւնը ձեռնհաս կլինի հետեւել ճշտութեամբ Աւետարանին եւ իւրացնել «Սիրի՛ր քո ընկերին անձիդ պէս» պատուէրը [Մատթ. Ե:43, Մարկ. ԺԲ:33]:*

*Բայց մարդը կարո՞ղ է հասնել այդ անհատական կատարելութեան եւ դառնալ անպայման բարոյական բնաւորութիւն: Յիսուս սովորեցնում է այդ ճանապարհը եւ միակ միջոցը, որով կարող ենք հասնել այդպիսի կատարելութեան, այն է՝ հաւատը: Հաւատա՛ Աստծուն, հաւատա՛ գաղափարների ճշմարտութեան, հաւատա՛ ուժերիդ եւ կհասնես կատարելութեան: Յիսուս Իւր անձնական օրինակով ցոյց տուեց, որ այդպիսի բարձր գաղափարներ կարելի է իրագործել կեանքի մէջ այն ժամանակ, երբ խորին կերպով առանց տատանուելու համոզուած ես գաղափարներիդ արդարութեան եւ ճշմարտութեան վրայ: «Ահա այդպիսի հաւատը լեռներ կարող է շարժել»,- ասում է Յիսուս, եւ այդպիսի հաւատի վրայ է հաստատում Նա Իւր եկեղեցին, որին չեն կարող խորտակել «դրունք դժոխոց»: «Դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի Իմ» [Մատթ. ԺԶ:18]: Ուրեմն եկեղեցու հիմքը կազմում է «վէմը»՝ Պետրոսի հաւատը, հաւատ, որի վրայ կառուցանում է Յիսուս Իւր ամբողջ վարդապետութիւնը, բարոյական գաղափարները, եկեղեցին:*

*Եկեղեցին հանդիսանում է մի մեծ բարոյական աստուածահաստատ հիմնարկութիւն, որը տարածում է ընդհանուր բնաւորութիւն ունեցող համաշխարհային մտքեր եւ գաղափարներ, որը ճգնում է կրթել, դաստիարակել ամբողջ մարդկութիւնը հոգու՝ ներքին աշխարհի վերանորոգմամբ, որն առաջնորդում է իւր անդամներին դէպի կատարելութիւն ո՛չ բռնի միջոցով եւ հրամանով, այլ բարոյական ազատութեամբ, մտքի եւ սրտի կրթութեամբ ու խղճի դաստիարակութեամբ, վերջապէս որը միջնորդ է իւր անդամների եւ Աստուծոյ մէջ, կապում է անդամներին «խորհուրդների» միջոցով իւր հետ՝ տալով նրանց աստուածային շնորհքներ:*

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՀՈՎԻՎՆ ՈՒ ԻՐ ՀՈՏԸ

# ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*Սկիզբը՝ էջ 2*

Սակայն բոլորը չէ, որ ունեն այդ գիտակցությունը: Այսօր մարդը հիմնականում իշխանության է ձգտում հարստանալու, վայելելու համար: Եթե մարդկային չափանիշներով նայենք, մեր վիճակն անհույս է, եթե Աստված չմիջամտի:

**- Ի վերջո, այդպիսի իշխանավորներն ուղղակի կամ անուղղակի կերպով գայթակղություն են հասարակ ժողովրդի համար:**

- Որեւէ երկրում սահմանված օրենքը գործադրվում է՝ օգնելով մարդկանց օրինապահ լինել: Իշխանավորը չի կարող երկրում օրենք հաստատել, եթե ինքն օրենքին չի ենթարկվում: Ես չպետք է ընդօրինակեմ իշխանավորի սխալը, թեեւ խիստ դժվար է:

**- Սողոմոն Իմաստունն ասում է, որ «հզորներն ավելի խիստ են դատվելու» (Իմաստ. Սողոմոնի Զ 6): Իշխանության ձգտող յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի, որ մի օր Աստծուն հաշիվ է տալու իր վարած իշխանության համար, այդպես չէ՞:**

- Այո՛, իշխանությունը ծանր բեռ է: Ավետարանում ասվում է. «Ում շատ է տրված, նրանից շատ էլ կպահանջվի»: Սողոմոն Իմաստունն էլ ասում է. «Լսեցեք, ո՛վ թագավորներ, եւ հասկացեք... Ականջ դրեք դուք, որ բազմություններ ունեք ձեր ձեռքի տակ եւ հպարտանում եք, որ տիրում եք բազում ազգերի վրա. ձեզ այդ իշխանությունը Տիրոջ կողմից է տրված, տերությունը՝ Բարձրյալից.



Նա էլ հատուցում է պահանջելու ձեր գործերի համար եւ քննելու է ձեր մտածումները...» (Սողոմոն Զ 1- 5): Եթե իշխանավոր մարդն ունենա Աստծո երկյուղը, Աստված իմաստություն էլ կտա, որով նա կհասկանա, թե ինչ պետք է անի, ինչպես պետք է ծառայի ժողովրդին: Չէ՞ որ «իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առակ. Ա 7): Մեր ժողովրդի միջից Աստծո երկյուղը պակասել է, վերացել է սրբության ընկալումը. իշխանավորի մեջ չկա, ժողովրդի մեջ չկա:

**- Իսկ որքանո՞վ է կարեւոր ղեկավարների համար մեր արած աղոթքը:**

- Մենք պարտավոր ենք սրտացավությամբ աղոթել մեր ղեկավարների համար: Եկեղեցին մշտապես աղոթում է նրանց համար ժամերգությունների եւ պատարագների ընթացքում: Այստեղ կան նրբություններ. մենք աղոթում ենք բարեպաշտ իշխանավորների համար: Իսկ եթե բարեպաշտ են, ինչո՞ւ ենք աղոթում: Քանի որ իշխանությունն այնքան մեծ գայթակղություն է որեւէ մեկի համար, որ մարդուն հեշտությամբ կարող է կորստի մատնել՝ կործանելով նաեւ ժողովրդին: Աստվածաշնչում բազում օրինակներ կան, երբ մի անօրեն թագավոր է իշխում՝ ժողովրդին էլ իր ետեւից կորստյան մատնելով: Իսկ քրիստոնյա պաշտոնյան, ով ունի վտանգը տեսնելու գիտակցություն, միշտ սթափ կլինի, իրեն կշրջապատի քրիստոնյա, ազնիվ մարդկանցով, եւ դա երջանկություն է որեւէ ժողովրդի համար:

**-Պողոս պատրիարք Ադրիանապոլսեցին ասում է, որ «Երջանիկ է այն ազգը, որի առաջնորդները բարեկարգ են, իշխանները՝ հայրենասեր, քահանաները՝ իմաստուն, դատավորները՝ արդար, ուսուցիչները՝ առաքինի, ծերերը՝ խորհրդատու, երիտասարդները՝ ջանասեր»: Երբեւէ գուցե Աստծու ողորմությամբ կկարողանանք մեզ վերագրել պատրիարքի խոսքը: Սակայն, ըստ ձեզ, այսօր մենք արդյո՞ք ազգովի դարձի, ապաշխարության կարիք չունենք:**

- Իհարկե ունենք: Մենք միասնական Աստծուն դառնալու, մեր մեղքերի համար զղջալու կարիքն ունենք, այդ դեպքում Աստված մեզ կօգնի: Ես լավատես եմ, հավատում եմ, որ մի օր այդ նկարագիրը մեր երկրում կլինի: Լավատես եմ, քանի որ տեսել եմ 88-ի հրաշքը. կարծես մի մեռած ժողովուրդ հարություն առներ... Ինչպիսի միասնականության ու ինքնագիտակցության դրսեւորում:

Մեզանում շատ են անընդունելի երեւույթները. սարսափելի է ճաշակի ու գեղեցիկի ընկալման այս աստիճանի անկումը. մտածում ես՝ ի՞նչ ժողովուրդ ենք. մեր պապերը կերտել են սքանչելի վանքեր, սրբավայրեր, որոնք Աստծուն անկեղծ սիրելու պտուղներն են: Առանց նվիրումի ու անկեղծ սիրո հնարավոր չէր լինի այդ անել: Մենք էլ, Աստծուն սիրելով, կսիրենք եւ մեր հայրենիքը, մեր ժողովրդին, չէ՞ որ այս ամենը տնտեսություն է, յուրաքանչյուրս պատասխանատու ենք Աստծու առաջ, թե ինչպես ենք տնօրինում այդ տնտեսությունը: Ես լավատես եմ, սակայն ձեռքերս ծալած չեմ նստում:

**- Տե՛ր հայր, «ձեռքերս ծալած չեմ նստում» ասելով՝ ի՞նչ նկատի ունեք:**

- Նկատի ունեմ անարդարությունը չհանդուրժելը, թույլին պաշտպան լինելը, սգավորներին մխիթարելն առանց վախի, բայց ոչ երբեք՝ զենք վերցնելը, ջարդելն ու փշրելը: Այո՛, այսօր վատի կողքին կա նաեւ լավը. եթե այդ էլ չլիներ, մեր վիճակն անհույս կլիներ: Ուրախալի է, որ այսօր թեեւ քիչ, բայց կան երիտասարդներ, որոնք անտարբեր չեն, ուզում են մաքուր լինել, բաց ճակատով նայել մարդկանց երեսին: Դա այն թթխմորն է, որից կարող է խմորվել ողջ զանգվածը (տե՛ս Մատթ. ԺԳ 33):

**- Տե՛ր հայր, ինչո՞ւ է Աստված Իր անքննելի նախախնամությամբ թույլատրում անօրեն իշխանությունների գոյությունը: Գուցե Տերը, գիտենալով մարդկանց քար սրտերը, այդպիսի իշխանություններին գործիք է դարձնում՝ մարդկանց դարձի համար:**

- Այո՛, Աստված թույլ է տալիս՝ մարդկանց դարձի համար. մարդկային հոգեբանությունն է այդպիսին: Մարդը պետք է հայտնվի մի որեւէ դժվարին իրավիճակի մեջ, որպեսզի շատ բաներ հասկանա: Աստված թույլ է տալիս ամբարիշտ մարդկանց իշխանության գալ ոչ թե մարդկանց կործանելու, այլ խրատելու համար: Մենք պետք է միասնական լինենք գոնե հանուն մեր երեխաների. թույլ չտանք, որ տարբեր անօրեն պաշտոնյաներ, կաշառակեր իշխանություններ մեր գլխին չարիք բերեն:

Գիտենանք, որ ժողովրդին ծառայելու, ժողովրդին ղեկավարելու լավագույն ձեռնարկն Աստվածաշունչ Մատյանն է: Գիտենանք նաեւ, որ բարեպաշտ թագավորն օրհնություն է ժողովրդի համար: Աստված պատրաստ է ամեն ժամ մեր աղոթքների շնորհիվ մեզ բարեպաշտ թագավոր շնորհել, բայց սա չի նշանակում, որ մենք պետք է ձեռքներս ծալած նստենք. եթե ես հանուն արդարության չեմ պաշտպանում թույլին, Աստված իմ աղոթքները չի լսի... Չվախենանք ճշմարտությանը հետամուտ լինելուց: Առանց վախենալու՝ պաշտպանենք, ինչքան կարող ենք:

## Կից սենյակում

# ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ
# «ՏԱՍԸ ԿՈՒՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ»

*(Մատթ. ԻԵ 1-13)*

**Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**



- Այս առակը Քրիստոսը պատմեց Երուսաղեմում՝ Իր փրկագործական տնօրինության վերջին եւ վճռական շրջանում՝ Ավագ երեքշաբթի օրը: Ընդհանրապես ընդունված է ասել, որ Ավագ երեքշաբթին նվիրված է հենց «Տասը կույսերի առակին», ավելի ճիշտ՝ առակից բխող ասելիքին եւ պատգամին:

Հիշեցնենք իրավիճակը. Ավագ երեքշաբթի մեր Տերը Ձիթենյաց լեռան վրա Իր աշակերտներին պատմում է Իր գալիք չարչարանքների, նեռի գալստյան, տաճարի ավերման, գործվելիք պղծությունների եւ Իր երկրորդ գալստյան մասին: Ու այս ամենն ամփոփում է «Տասը կույսերի առակով»: Ավետարանական պատգամը կարծես թե հստակ է. արթո՛ւն կացեք, որովհետեւ չգիտեք Տիրոջ գալստյան եւ ձեր բարի կամ չար գործերի քննության ո՛չ օրը եւ ո՛չ էլ ժամը:

**Տե՛ր հայր, անշուշտ, «արթո՛ւն կացեք» հորդորը չպետք է ընկալել «մի՛ քնեք» ֆիզիկական իմաստով: Ա՞յլ...**

- Ավետարանի էջերում բազմիցս հանդիպում ենք Տիրոջ՝ Իր աշակերտներին ու ժողովրդի բազմությանն ուղղված արթնության կոչերին: Պարզ է, որ Տիրոջ պատգամը հիմնականում վերաբերում է հոգեւոր արթնությանը եւ միաժամանակ աղոթքով արթուն, բարի գործերով արթուն, աստվածպաշտությամբ ու սուրբ կենցաղավարությամբ արթուն լինելու իմաստն ունի: Սակայն կար նաեւ մարմնի արթնության հանգամանքը, որով պիտի աղոթեին եւ հարաժամ Աստծու ողորմությունը խնդրեին, ինչպես որ մատնության գիշերը Գեթսեմանիի պարտեզում եղավ առաքյալների հետ. Քրիստոսը մի քանի անգամ գնում աղոթքի էր կանգնում Հոր առաջ եւ ամեն անգամ գալով՝ քնի մեջ էր գտնում աշակերտներին: Եվ ամեն անգամ պատվիրում էր. «Արթո՛ւն մնացեք եւ աղո՛թք արեք, որպեսզի փորձության մեջ չընկնեք» (Մատթ. ԻԶ 41):

Առակի ամբողջ բովանդակությունն այս մեկ խոսքի մեջ կարելի էր ամփոփել: Սակայն «մանրուքների» մեջ առակը բազմաթիվ երանգներ, բազմաթիվ ասելիքներ ունի, որոնք չի կարելի անտեսել: Սկսենք առակի մուտքից. «Այն ժամանակ երկնքի արքայությունը պիտի նմանեցվի տասը կույսերի, որոնք իրենց լապտերներն առած՝ փեսային եւ հարսին դիմավորելու ելան: Նրանցից հինգը հիմար էին, իսկ հինգը՝ իմաստուն: Հիմարները լապտերներն առան, բայց իրենց հետ պահեստի ձեթ չվերցրին: Իսկ իմաստուններն իրենց լապտերների հետ միասին ամաններով ձեթ վերցրին» (Մատթ. ԻԵ 1-4): Հարսանիք էր: Գիտենք՝ Տիրոջ եւ Եկեղեցու միությունն է, որ հարսանիքի է նմանեցվում: Եվ տասը կույսերը հրավիրված էին մասնակցելու աստվածային, տիեզերական այդ հանդեսին: Ինչո՞ւ տասը. որովհետեւ տասը կատարյալ թիվ է: Իսկ ինչո՞ւ կույսեր. «կույս» բառն այստեղ մաքուր եւ անաղարտ իմաստն ունի: Տասն էլ կույս էին, այսինքն՝ իրենց անձերի մեջ կրում էին կուսության, այն է՝ մաքուր ու անաղարտ հավատքի սրբությունը: Սրանից պետք է ենթադրել, որ Տերն այս առակը պատմեց հենց քրիստոնյաների՝ Իր վարդապետության հետեւորդների համար, եւ նկատի չառնվեցին Եկեղեցուց դուրս մարդիկ: Տասը հրավիրյալներն էլ ստացել էին Աստծուց ճշմարիտ աստվածպաշտության մաքուր ու անաղարտ հավատքը, սրբությունը, մյուս շնորհները: Եվ տեսնում ենք՝ տասի նպատակն էլ մեկն էր՝ սպասել փեսայի գալուն (իմա՝ վերադարձին): Ընդհանրապես Եկեղեցու բուն նպատակն է՝ արթնությամբ սպասել Քրիստոս-փեսայի վերադարձին, Նրա երկրորդ գալստին: Տերն Ինքը խոստացավ շուտով վերադառնալ: Այդ «շուտովը» կարծես թե գիտակցում էին կույսերը, քանի որ սպասում էին: Տասի ձեռքին էլ ճրագ կար, տասը ճրագն էլ վառվում էին: Այսինքն՝ նրանց հավատքը գործուն հավատք էր: Իսկ յուղը (ձեթը) Սուրբ Հոգին է խորհրդանշում. Քրիստոսի հետ հավատքով նշանված կույսերը, մկրտվելով Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով, կնքվում են սուրբ մյուռոնի յուղով, եւ նրանց հոգու լապտերները վառվում են Սուրբ Հոգու շնորհներով:

**- Բայց «փեսան ուշացավ», եւ ամեն ինչ խառնվեց իրա՞ր: Ինչո՞ւ, տե՛ր հայր. չէ՞ որ «փեսայի ուշանալու» եւ նրա «շուտով վերադառնալու» խոստման մեջ որեւէ հակադրություն չեն տեսնում ո՛չ առաքյալները, ո՛չ Եկեղեցու սուրբ հայրերը: Չգիտեի՞ն, որ փեսան կարող է ուշանալ:**

- Իհարկե գիտեին: Բայց պարզվում է՝ միայն գիտենալը քիչ է, եւ սա հենց ուղղակի հակադրությունն է մարդկային մտածելակերպի եւ աստվածային տնօրինության: Տեսեք՝ առաքյալներն ասում էին՝ շուտով կգա: Եվ շատերը թե՛ այն ժամանակ, թե՛ այսօր այդ «շուտովը» ընկալեցին իրենց մարդկային սահմանափակ մտքի համեմատ. առաքյալները մահացան, տասնյակ դարեր են անցել, բա ո՞ւր է այդ «շուտովը», «Ո՞ւր է Նրա գալստյան խոստումը, քանի որ նախահայրերի ննջելուց հետո ամեն ինչ նույն ձեւով է մնում, ինչպես էր արարչագործության սկզբից» (Բ Պետ. Գ 4): Դեռ այն ժամանակ առաքյալը բացատրում էր. «Սիրելինե՛ր, Տիրոջ համար մեկ օրը՝ ինչպես հազար տարի է, եւ հազար տարին՝ ինչպես մեկ օր» (Բ Պետր. Գ 8): Այսինքն՝ Աստված ժամանակից դուրս Էություն է, եւ հետեւաբար Աստծու համար ժամանակի ընկալումն ու տնօրինումը բոլորովին այլ է, որովհետեւ մենք ենթակա ենք ժամանակին, իսկ Աստված՝ ո՛չ: Մյուս կողմից՝ «Իզուր եք անհանգստանում. Տերը չի ուշացնի Իր խոստումը եւ եթե «ուշացնում է», ապա միայն ձեր օգուտի համար, քանզի չի ուզում, որ որեւէ մեկը կորստյան մատնվի, այլ ուզում է, որ ամենքն ապաշխարեն, որպեսզի փրկվեն» (հմմտ. Բ Պետր. Գ 9):

**- Ի վերջո, ժամանակների Տիրոջ սահմանած ժամկետի համեմատ նույն ակնթարթը չէ՞ն մեկ օրը թե հազար տարին: Բոլորն էլ՝ ոչ միայն առաքյալները, այլեւ Եկեղեցու սուրբ վարդապետները, ասում եւ զգուշացնում են այնքան համոզված, կարծես հենց իրենց կյանքի օրերին է դա լինելու: «Մոտ է ժամանակը», «հեռու չէ օրը» արտահայտությունները շատ ծանոթ են մեզ...**

- Իրենք ճիշտ էին: Որովհետեւ երբ իրենք ննջեցին, այլեւս ժամանակը դադարեց նրանց համար: Երբ մարդու հոգին բաժանվում է մարմնից, այլեւս հոգու համար ժամանակ հասկացությունը գոյություն չունի, այսինքն՝ հոգեղեն իրողությունները վերժամանակյա են: Եվ ուրեմն՝ փեսան ուշացավ: Վերադառնանք առակի տեքստին. «Եվ երբ փեսան ուշացավ, ամենքն էլ նիրհեցին եւ քուն մտան: Եվ կեսգիշերին ձայն լսվեց՝ ահա՛ փեսան գալիս է, նրան դիմավորելո՛ւ ելեք: Այն ժամանակ բոլոր կույսերը վեր կացան եւ իրենց լապտերները կարգի բերեցին: Հիմարներն իմաստուններին ասացին. «Ձեր այդ յուղից տվեք մեզ, որովհետեւ ահա մեր լապտերները հանգչում են»: Իմաստունները պատասխան տվեցին եւ ասացին. «Գուցե թե՛ մեզ եւ թե՛ ձեզ չբավականացնի, ուստի գնացե՛ք վաճառողների մոտ եւ ձեզ համար գնեցե՛ք»: Երբ նրանք գնացին, որ գնեն, փեսան եկավ, եւ ովքեր պատրաստ էին, նրա հետ հարսանիքի սրահը մտան, ու դուռը փակվեց»:

Փեսային երկար սպասելուց, թերեւս, կույսերի համբերությունն սպառվեց, նրանք չկարողացան մինչեւ վերջ արթուն մնալ ու ննջեցին, քուն մտան: Սա բնական վիճակ է. ժամանակ առ ժամանակ մարդ կարող է տկարանալ: Մյուս կողմից՝ «քուն» ասելով՝ Հիսուսը նկատի ունի մահը: Ըստ Պետրոս Բերդումյանի եւ այլ մեկնիչների՝ բոլոր հավատացյալները, հավատքի լապտեր ունենալով, ննջում են մինչեւ Քրիստոսի գալուստը: Բայց ըստ Հովհաննեսի՝ «երանի՜ այն մեռելներին, որոնք այժմվանից իսկ ննջեցին ի Տեր: Հոգին այս բանն է ասում՝ հանգստացան իրենց տքնությունից, եւ միայն իրենց գործերի արդյունքը հետեւեց իրենց» (Հայտ. ԺԴ 13): Այսինքն՝ երանի՜ այն մեռելներին, ովքեր բարի գործերի յուղի պատրաստությամբ ննջեցին ի Տեր՝ իրենց ապրած կյանքում բազում առաքինություններ պահեստավորած, ինչպես իմաստուն կույսերը: Իսկ անպատրաստները, ովքեր «իրենց հետ պահեստի ձեթ չվերցրին», ննջում են խղճմտանքով եւ հարության ժամանակ՝ դատաստանի օրը, զարթնելու են արհավիրքից զարհուրած, ինչպես հիմար կույսերը:

Առակի այս դրվագը հարուստ նրբերանգներ ունի, որոնք մեկնության լայն դաշտ են բացում: Օրինակ՝ հիմար կույսերի ձեռքին էլ վառվող ճրագ կար, իրենք նույնպես սպասում էին փեսային, ինչպես իմաստուն կույսերը: Սակայն տեղի տվեցին. իրենց ճրագներում այլեւս յուղ չկար, ասել է թե՝ իրենց մեջ այլեւս ուժ չկար, զորություն չկար, օծություն չկար, իմաստություն չկար, նվիրում չկար... շատ բաներ այլեւս չկային, ինչի արդյունքում իրենց ճրագները հանգան: Դրա՛ համար է Տերը սրանց հիմար կոչում: Այս հինգը պահեստային յուղ չէին վերցրել ի սկզբանե, մինչդեռ իմաստունները վերցրել էին: Գիտեք՝ միշտ պատրաստ լինելու եւ ամեն բան իր ժամանակին անելու խնդիրը կա: Ասենք՝ հավատավոր մարդ կա, որ իր կյանքում որեւէ բարի առիթ բաց չի թողնում. մոտակայքում եկեղեցի կա՝ ամեն կիրակի այնտեղ է, ուխտագնացություն կամ մի ինչ-որ հոգեւոր հավաք կա՝ անպայման ներկա է. իմաստուն ընթացքը սա է: Չէ՞ որ երբ քո խաղաղ օրը, տանդ մեջ նստած, Սուրբ Գիրքն ես ընթերցում, աղոթքով ու Աստծու փառաբանությամբ ես քնում ու արթնանում, դրանով իսկ միտքդ զինում ես աստվածային անխոցելի զրահով: Եվ երբ նեղության մեջ ընկնես, այդ ժամանակ Սուրբ Հոգի Աստված քո իսկ մեջ եղած զորությունը՝ Աստծու խոսքը, քեզ համար պիտի օգտագործի եւ քեզ շատ մեծ շնորհների արժանացնի:

*Շարունակությունը՝ էջ 8*



# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
## (1897-1937)

*Սկիզբը՝ էջ 4*

Չարենցի ձերբակալության հրահանգը տրվել է 1937 թ. հուլիսի 26-ին: Երեւանի բանտի անմարդկային պայմաններում Չարենցն ապրում է իր կյանքի արյունալիճ կեսօրվա վերջին պահերը: Ծանրագույն վիճակում անգամ նա պահպանում է ոգու կորովը, վանդակաճաղերի ետեւից նամակներ հասցեագրում կնոջը եւ խորհուրդ տալիս. *«Ամուր եղիր, հարազատս,- եթե նույնիսկ փողոց գցեն: Չէ՞ որ միայն մենք չենք տառապում, այլ շատ-շատերը, նույնպիսի մարդիկ, ինչպես մենք ենք: Միայն աշխատիր պահել քեզ ու երեխաներին,- ես քեզանից պահանջում եմ միայն դա: Թող աստված քեզ պահապան լինի,- չէ՞ որ մենք, հարազատս, ոչ ոք չունենք»:*

Կարճ ժամանակ անց ձերբակալում են նաեւ Չարենցի կնոջը՝ որբության մատնելով երկու անչափահաս դուստրերին: Թե՛ հարցաքննությունների ժամանակ, թե՛ բանտում անցկացրած ամիսներին Չարենցն իրեն պահել է ասպետորեն բարձր ու վեհ, ստվեր չի նետել գրական ընկերների վրա, չի արատավորել ո՛չ նրանց, ո՛չ էլ իրեն:

Ահա այս դժոխային պայմաններում, 1937 թ. նոյեմբերի 27-ի առավոտյան, Երեւանի բանտում, օրեր շարունակ տեւած անգիտակից վիճակից հետո, բոլորից լքված ու անօգնական, իր մահկանացուն է կնքում ժամանակի մեծագույն բանաստեղծը: Նա, որ արդեն վաղուց լեգենդ էր դարձել իր ժողովրդի համար, շարունակեց այդպես էլ ապրել մինչեւ իր նոր հարությունը: Նրա անունը չմոռացվեց, ապրեց օրերի հոգեւոր պատմության մեջ: Չարենցի վաստակը ժողովրդին վերադարձվեց 1954-ին: Սկսվեց մեծ գրողի ետմահու հավերժական կյանքը:

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# Կնոջ կերպարի հայեցակարգը Ռ. Էլիբեկյանի արվեստում



Համաշխարհային մշակույթի ստեղծման ներշնչանքի առանցքային գործոններից մեկը հնագույն ժամանակներից ի վեր եղել է կինը: Նա ընկալվել է թե՛ որպես կյանքն իր մեջ կրող ու պարգեւող քարանձավ, ջրհոր, ակնաղբյուր, անոթ եւ թե՛ այդ կյանքը պահպանող ու սնուցող առեղծվածային այն էակը, որն օժտված է ներըմբռնողությամբ, նրբազգացությամբ, քնքշությամբ, անմնացորդ սիրով ու նաեւ փոփոխական հուզականությամբ: Նա մշտապես ակնածանքի է արժանացել ինչպես իր կանացի տկարությամբ, նույնքան էլ աներեւակայելի զորեղությամբ, մանավանդ եթե խոսքը վերաբերում է իր զավակի կամ սիրեցյալի պաշտպանությանը: Այստեղ չի կարելի բացառել նաեւ կնոջ պլաստիկ ձեւերի գրավչությունը:

Այս բարդ ու հակասական, հաճախ անկանխատեսելի էակը եղել է, կա ու մնում է որպես կյանքի հավերժագո շարժիչ ուժը. կնոջն են միայն հասու մայրության անպարտելի ոգու իշխանությունը եւ երկունքի ցավի երկակի զգացողությունը՝ որքան տառապալից, նույնքան եւ քաղցր: Տղամարդը կնոջ մեջ է տեսել կյանքի հանդեպ իր սիրո ու մաքառումի իրական կիրքը, ընկնելու եւ բարձրանալու իր «պտուտաձողը»: Հանուն կնոջ՝ վերելքներ են ապրել ու ճգնաժամի հասել երկրներ, կառուցվել ու կործանվել քաղաքներ ու դղյակներ, արարվել կերպարվեստի գլուխգործոցներ, գրական ու երաժշտական գոհարներ...

Հայ իրականության մեջ վաղնջական ժամանակներից ի վեր մշտապես մեծարվել է կինը: Նա եղել է սիրո, մաքրության, մայրության խորհրդանիշը, գնահատվել ու փայփայվել է՝ որպես անկոտրում նվիրումի, ընտանիքի ամրության ու հավատարմության մարմնացում: Մեզ հասած հայկական մշակութային ժառանգության մեջ համենայն դեպս չի պահպանվել բախտախնդիր կնոջ ոչ մի կերպար, ոչ մի անուն: Նույնիսկ հայկական դիցարանից մեզ հասած աստվածուհիները եղել են միայն մայրության ու սիրո հովանավորներ:



Հայոց պատմությունը մեզ թողել է նաեւ հայ կնոջ հայրենասիրության ու ազգային արժեքներին անմնացորդ նվիրվելու սքանչելի օրինակներ: Հիշենք թեկուզ Եղիշեի Վարդանանց պատմության այն դրվագը, որում պատմիչը գրում է, թե ինչպես հայոց աշխարհի փափկասուն տիկինները «Մոռացան իրենց կանացի տկարությունը եւ առաքինի տղամարդիկ դարձան հոգեւոր պատերազմի մեջ...»՝ կանգնելով իրենց ամուսինների կողքին. այդ կանանց մենք տեսնում ենք նաեւ մեր պատմության հետագա անցքերում, տեսնում ոչ միայն թշնամու դեմ մղած պատերազմներում, այլեւ քաղաքաշինության ու հայրենաշինության ակունքներում, մշակութային արժեքների ստեղծման ու պահպանման գործում:

Իսկապես հայ կնոջ հոգեւոր ու բարոյական կերտվածքը պարտավորեցնող է: Նրան ենք պարտական մեր անզուգական քնարերգության ու կերպարվեստի գլուխ-



գործոցների, գուսանական ու ժողովրդական անկրկնելի երգերի ու տաղերի համար: Նրան ենք պարտական նաեւ նկարիչ Ռոբերտ Էլիբեկյանի՝ մեզ ավանդած այն հիասքանչ գործերի համար, որոնցում հիմնականում վեր են հանված կնոջ կերպարի ինքնատիպ ու զարմանալի խոսուն տարընթերցումները:

Էլիբեկյանի վրձնած կանայք, որոնք մեծապես առինքնում են ոչ միայն իրենց նրբությամբ ու գեղեցկությամբ, հոգեբանական հագեցվածությամբ, կատարողական անթերի լուծումներով, ներքին արժանապատվությամբ ու առաքինությամբ, առանձնակի դերակատարությամբ ու արժեւորումով, ընդգծված անհատականություններ են եւ դրանով հանդերձ՝ մեծապես ներկայացնում են ժամանակակից կնոջ ընդհանրական, հավաքական մարմնացումը:

*Շարունակությունը՝ էջ 8*

---

ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է

*Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.)*

**Ներսէս վրդ. Մելիք-Թանգեան**

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ

**(առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Ա. Բոզոյանի)**

*Սկիզբը՝ էջ 5*

*Պարզ է, որ այդպիսի եկեղեցին կարող է լինել «միմիայն, սուրբ, ընդհանրական եւ առաքելական»:*

*Եկեղեցու այսպէս ասած ներքին մասը՝ անտեսանելի կողմը, այսինքն՝ գաղափարները, բարոյական-կրօնական մտքերը, եկեղեցու խորհուրդների ներքին ազդեցութիւնը, ժամերգութեան էական մասը, կազմում են մարդու ներքին աշխարհի խնդիր, նրա համոզմունքի եւ խղճի առարկայ: Այդ համոզմունքները չի կարելի իրաւական սահմանների մեջ դնել, իրաւաբանական նորմաների ենթարկել, արտաքին կարգերով գծել, որովհետեւ դրանք հաւատքի վրայ են յենուած, իսկ հաւատքը խղճի գործ է, խիղճը պատասխանատու է իւր եւ Աստուծոյ առաջ, խիղճը կանոնների մեջ ամփոփել չի կարելի:*

*Ուրեմն եկեղեցին այս տեսակէտով իրաւաբանական հասկացողութիւն չէ, այլ զուտ բարոյական-կրօնական. «Թագաւորութիւնն Իմ չէ յայսմ աշխարհէ» [Յովհ. ԺԸ:3]:*

*Բայց քրիստոնէական-բարոյական գաղափարներն այնպիսի սկզբունքներ են, որոնք միմիայն կարող են գոյութիւն ունենալ եւ իրագործուել կեանքում՝ մարդկային հասարակութեան մէջ: Ահա եւ հարց է ծագում՝ եկեղեցու այդ անտեսանելի մասը կարո՞ղ է արդեօք ամբողջացած եկեղեցի կազմել առանձին վերցրած՝ առանց տեսանելի կողմի, այսինքն՝ առանց մարդկային հասարակութեան (անդրանկաց եկեղեցին է զուտ գաղափարական գոյացութիւն), կամ մարդիկ կարո՞ղ են եկեղեցի կազմել առանց այդ անտեսանելի կողմի. իհարկէ ոչ: Եկեղեցի կազմելու համար անհրաժեշտ են երկու մասն էլ՝ տեսանելին եւ անտեսանելին, այսինքն՝ հաւատը՝ իւր բոլոր գաղափարականով, եւ մարդկային հասարակութիւնը: Լուսաւորչի եւ Սբ Սահակի «Որոշում վանացն» սահմանադրութեան մէջ խօսւում եւ բացատրւում է եկեղեցու նշանակութիւնը. անտեսանելի կողմի համար ասուած է. «Ճշմարիտ հաւատն է եկեղեցի»: Տեսանելի կողմի համար ասուած է. «Չի ոչ եթէ զխորանն կոչէ եկեղեցի... այլ զհաւատացեալ ժողովուրդն...»:*

*Ուրեմն եկեղեցին է Քրիստոսին հաւատացող մարդկանց ժողովը, որն աստուածային շնորհքների ընդունմամբ եկեղեցու պաշտօնեաների ձեռքով ձգտում է հասնել Քրիստոսի քարոզած աւետարանական բարձր գաղափարներին:*

*Եկեղեցու բարձր գաղափարները եւ միջոցները թէեւ զուտ բարոյական-կրօնական են, բայց նրանք, գործադրուելով մարդկային հասարակութեան մէջ, առաջ են բերում անհատների յարաբերութիւններ, զանազան անձանց շահերի մրցումներ, բազմատեսակ կամքերի շփումներ եւ դրանով զուտ գաղափարական-բարոյականից անցնում են գործնականին, որից եւ ծագում է իրաւունքի խնդիրը:*

*Եկեղեցու անդամները, բացի միմեանց հետ ունեցած յարաբերութիւնից, անհրաժեշտ պահանջից մղուած, ստիպուած են շփում ունենալ եւ այն մարդկանց եւ խմբակցութիւնների շրջանների հետ, որոնք եկեղեցուց դուրս են, քրիստոնեայ չեն: Եկեղեցու անդամների յարաբերութիւնն ստանում է աւելի մեծ ծաւալ, աւելի մեծ ընդարձակութիւն, եւ դրանով իրաւունքի խնդիրն աւելի մեծ շրջանի մէջ է մտնում:*

*Եկեղեցին, իբրեւ բարոյական-կրօնական ղեկավարիչ հիմնարկութիւն, կամայականութիւնների առաջն առնելու, անձնական քմահաճոյքներն արմատախիլ անելու եւ իւր անդամներին որոշ ուղղութեամբ առաջնորդելու համար պարտականութիւն է համարում օրէնքով, կանոններով որոշել ամէն մի անդամի յարաբերութիւնը դէպի եկեղեցին, դէպի միմեանց եւ դէպի այլ անհատներ ու շրջաններ, որոնք եկեղեցուց դուրս են: Այս կերպով սահմանւում են ամէն մի անհատի եւ ամբողջութեան իրաւունքների սահմանները եւ պարտաւորութիւնների կարգը: Իրաւունքը մի կողմից ապահովեցնում է մարդու ազատութիւնը եւ բարոյական կամքի զարգացումը՝ թոյլ չտալով ուրիշներին ոտնակոխ անել այդ սրբազան կարգը, միւս կողմից զսպում է մարդու անհատական քմահաճոյքը՝ ուղղուած ընդհանուրի բարեկեցութեան դէմ, եւ նորմաների տակ ձգում:*

*Իրաւունքի այս տեսակէտից եկեղեցին մտնում է իրաւաբանական շրջանի մէջ: Կազմւում է եկեղեցական վարչութիւն՝ որոշ կարգ ու կանոնով, օրէնքներով, որը ղեկավարւում է ոչ պետական-քաղաքացիական ճնշող միջոցներով, այլ բարոյական եւ մեղմ: Զանցառուները ենթարկւում են ոչ քաղաքացիական պատժի, բռնի ստիպումների, բանտի, տաժանակիր աշխատանքի ու աքսորի, այլ հեռացւում են եկեղեցուց իբրեւ անարժան անդամներ: Եկեղեցական կանոնները, կազմուած լինելով որոշ ուղղութեամբ, բոլոր անդամների համաձայնութեամբ, պարտաւորիչ են բոլորի համար: Ամէն մի անհատը, իւր ազատական համաձայնութեամբ եկեղեցու անդամ համարուելով, պարտաւոր է կատարել բոլոր կարգ ու կանոնները, հասարակական-կրօնական ծէսերը, արարողութիւնները. անհամաձայնութեան դէպքում ազատ է դուրս գալու այդ եկեղեցու ծոցից՝ պատասխանատու լինելով միայն իւր խղճի եւ Աստուծոյ առաջ:*

*Այսպիսով, եկեղեցին իւր առանձին կարգ-կանոնով, իւր բարոյակրթական, պատժողական եւ ուղղիչ միջոցներով կազմում է մի ամբողջական մարմին՝ իրաւաբանական մտքով, որով եւ զբաղւում է եկեղեցական իրաւունքը: Այս իրաւունքը վերաբերում է ոչ եկեղեցու էութեան, ինչպէս աստուածային հաստատութեան, այլ այն արտաքին կազմակերպութեան, որով սահմանի տակ են դրւում նրա բոլոր անդամների բազմազան յարաբերութիւնները: Այս յարաբերութիւնները երկու շրջանով են բացորոշւում՝ ներքին եւ արտաքին. ներքին յարաբերութիւնը տեղի է ունենում եկեղեցու անդամների շրջանում, արտաքին յարաբերութիւնը՝ եկեղեցու եւ ուրիշ հասարակական կազմակերպութիւնների մէջ: Այստեղից էլ առաջանում է եկեղեցական իրաւունքի՝ երկու մտքով ըմբռնելու եւ բացատրելու ձեւը:*

*Եկեղեցական իրաւունքը ներանձնական մտքով (в субъективном смысле) համախմբումն է այն կանոնների, իրաւունքների եւ պարտաւորութիւնների, որոնք տրուած են եկեղեցու անդամների համար:*

*Եկեղեցական իրաւունքն արտանձնական մտքով (в объективном смысле) այն օրէնքների եւ սահմանների համախմբումն է, որոնցով որոշւում է եկեղեցու յարաբերութիւնն ուրիշ հասարակական մարմինների հետ (պետութեան այլադաւան, այլակրօն ազգերի եւլն, եւլն):*

էջ 17-22

# Կնոջ կերպարի հայեցակարգը Ռ. Էլիբեկյանի արվեստում





*Սկիզբը՝ էջ 7*

Սա է, թերեւս, այն հիմնական պատճառը, որ Էլիբեկյանի ստեղծած կինը՝ լինի թատրոնի դերասանուհի թե սովորական մի ծանոթուհի, ազգականուհի թե հենց իր՝ նկարչի կինը, առօրեականից փոխակերպվում է վերացականի, դառնում պահի ու անցքի ոչ միայն երեւակայական կերպարը, այլեւ իրական կյանքի լիիրավ մասնակիցը՝ հասարակական թե անձնական, մշակութային թե կենցաղային դաշտում:

Էլիբեկյանի կանանց կերպարներն ուսումնասիրելիս պարզորոշ նկատելի է մի հանգամանք, որն էապես տարբերակում է մտցնում այլ նկարիչների եւ նրա՝ կնոջ կերպարի մեկնաբանման հայեցակարգում: Դա ժամանակի վերացական ընկալման պարագան է, որ թույլ է տալիս նկարչին կնոջ ֆիզիոլոգիական հետագա դրսեւորումները դիտարկել ժամանակից դուրս՝ առաջին պլան մղելով սոսկ նրա հոգեւոր ու հոգեբանական, հուզական ու ներհուզական զարգացումները: Ասածս ավելի քան հաստատվում է, երբ փորձում ենք կողք կողքի դնել նույն անձանց՝ Սոնայի, Մարիամի, Ռայայի, Մարիի եւ այլոց՝ տարբեր տարիներին ստեղծված դիմանկարները: Գործերի այս շարքում զարմանալին այն է, որ նկարիչն այս կամ այն դիմանկարը ստեղծելիս չի չարչրկում լուծումների համախմբությունը, չի փորձում փնտրել գեղարվեստական միջոցների եւ էֆեկտների անհիմն ու սին խաղեր՝ իր առջեւ դրված խնդրին հասնելու համար: Նա դրան հասնում է միանգամից, վրձնի առաջին իսկ հպումից՝ կտավի վրա ներկը ներկի, գույնը գույնի կողքին «նստեցնելով»՝ առանց ներդաշնության երկարատեւ որոնումների, առանց դրանց կասկածելի «փորձարկումների». դրանք ասես ի վերուստ են թելադրված, ի վերուստ չափ ու կշիռ առած: Ինչպես գիծը, այնպես էլ գունաթույրը, ինչպես դիմագծերի դիպուկությունը, այնպես էլ հոգեբանական առանձնահատկությունները վրձնահարվածված են ասես ինքնաբերաբար, թեթեւ ու անբռնազբոս, սրտի ու մտքի, զգացմունքների ու տրամադրության լոկ պահի պոռթկումից՝ չենթարկվելով բնավ ժամանակի ու տարածության քմահաճություններին: Սա խոսում է այն մասին, որ նկարիչը երբեւէ պատվերառու չէ. նա խորությամբ գիտի իր «բնորդուհուն» եւ ամենագլխավորը՝ սիրում է նրան՝ զանց առնելով տարիների՝ հաճախ ավերիչ առկայությունը:



Կերպավորման նման մոտեցումը, որով նկարիչը փորձում է կարեւորել իր ժամանակների կնոջ բուն էությունը, նրա հոգու ելեւէջները, ներքին ու արտաքին հայտերը, միանգամայն խորքային է եւ ունի հիմնավոր սկզբունք՝ կինը տարիք չունի. նա միշտ գեղեցիկ է եւ առինքնող: Նա մայրության եւ սիրո անոթն է՝ միշտ ու հավերժորեն անմրցելի:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

---

Կից սենյակում

## ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ

# «ՏԱՍԸ ԿՈՒՅՍԵՐԻ ԱՌԱԿԸ»

*(Մատթ. ԻԵ 1-13)*

### Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

*Սկիզբը՝ էջ 6*

Երբ մենք սովորում էինք քահանայից լսարանում, առավոտից մինչեւ երեկո գիրք էինք կարդում: Եվ փա՛ռք Աստծո, որ կար այդ բարի մթնոլորտը, երբ բոլորը կարդում էին, որովհետեւ հիմա, որ արդեն քահանայության պաշտոնի մեջ ենք, գրեթե ժամանակ չի մնում ընթերցանության համար: Ու եթե այն ժամանակ չընթերցեինք, հիմա պիտի զուրկ մնայինք. չէ՞ որ հիմա տալո՛ւ ժամանակն է: Բայց եթե չես վերցրել, որտեղի՞ց տաս: Ճիշտ եւ ճիշտ հիմար կույսերի պես. լսել էին Աստծո խոսքը, բայց չէին գործադրել: Ժողովուրդն ասում է՝ մի ականջից մտել, մյուսից դուրս էր եկել: Դրա համար էլ երբ փեսան եկավ, իրենք բացակա էին, եւ իրենց բացակայությամբ «դուռը փակվեց»: Բայց չէ՞ որ Տերը զգուշացրել էր, որ Ինքը հանկարծակի պիտի գա, եւ վա՛յ նրանց, ովքեր քնած կլինեն: Ինչո՞ւ. որովհետեւ ով քնած (անպատրաստ) լինի, ում ճրագի մեջ յուղ չլինի, նա պիտի զրկվի աստվածային շնորհից: Ճիշտ այնպես, ինչպես հիմար կույսերը զրկվեցին, երբ ուշացած գալով՝ խնդրում էին Տիրոջը, որ բաց անի դուռը, սակայն Տերն ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում»: Որից հետո Հիսուսը դիմում է Իրեն լսողներին՝ արթնության նույն կոչով. «Արթո՛ւն կացեք, որովհետեւ չգիտեք ո՛չ օրը եւ ո՛չ էլ ժամը»:

**- «Հիմա կվայելեմ, հետո կապաշխարեմ»,- այս բավականին կենսունակ մտայնությունը, կարծում եմ, ուղղակիորեն է կապվում «Տասը կույսերի առակի» հետ: Ի՞նչ կասեք, տե՛ր հայր:**

- Սուտ եւ կեղծ գաղափար է: Չկա՛ նման բան: Իրական եւ մեծագույն վայելքը հենց ապաշխարության պտուղն է, ապաշխարությամբ միայն կարող է տրվել այն, որ գիտի՝ ինչ է Աստծուն պաշտելը եւ Աստծուց առաջնորդվելը, գիտի՝ ինչ է ժամանակավորի,



ինչը մենք վայելք ենք անվանում: Որովհետեւ իսկական վայելքն առաջին հերթին հոգեւոր երեւույթ է: Այո՛, շատերն են այդպես մտածում՝ հիմա կյանքը կվայելեմ, իսկ երբ մեծանամ, տարիքս առնեմ, նոր միայն կամուսնանամ, կապաշխարեմ եւ այլն: Ներողությո՛ւն, ի՞նչ ես հասկանում՝ կյանքը վայելել ասելով, շնությո՞ւնն է կյանքի վայելքը, թե՞ անիմաստ կերուխումը: Իսկ ի՞նչ է՝ ամուսնության, ընտանիքի մեջ վայելք չկա՞. մի՞թե երիտասարդ ծնողի համար իսկական վայելք չէ իր փոքրիկ մանկանը գրկելը, գուրգուրելը… Մյուս կողմից՝ իսկ եթե հետո, թերեւս, ուշ լինի՞: Օրինակները բազում են, եւ բոլորն էլ փաստում են, որ վայելք կոչվածը կարող է ճաշակել միայն ու միայն ապաշխարող հոգին, այն հոգին, անցողիկի մեջ հավիտենականը փնտրելը, այս երկրավոր կյանքում երկնային գանձարանը լցնելը: Մարդ, որը գիտի՝ ինչու է ապրում, ինչու պիտի ապրի, ինչու պիտի բարին գործի: Եվ իրոք, եթե դու Աստծու պատվիրաններով առաջնորդվես, քո սրտից սե՛րը կհորդի, հո՛ւյսը կհորդի, համբերությո՛ւնն ու խաղաղությո՛ւնը կհորդեն. սրանից ավելի մեծ վայե՞լք… Նման մարդը ոչ միայն ինքն է երջանիկ, այլեւ ընդունակ է երջանկացնելու իր շրջապատի մարդկանց:

**- Մի կարծրացած մտայնություն էլ կա, որ իբր մարդը որոշակի տարիքից հետո այլեւս չի կարող փոխվել. խոսքը բարոյապես վերածնվելու մասին է: Իսկ քրիստոնեությունն ասում է, որ երբեք ուշ չէ, քանի դեռ ապրում ենք այս աշխարհում: Անդադար հնարավորություն տալու այս երեւույթը, տե՛ր հայր, չի՞ թուլացնում արդյոք անկեղծ զղջման ու ապաշխարության ճշմարիտ զորությունը:**

- Ո՛չ: Որովհետեւ ամեն մարդու կյանքն անկրկնելի է, ինչպես ինքը՝ մարդը: Ինչ վերաբերում է փոխվել-չփոխվելուն, առաքյալներն ո՞ւմ էին քարոզում. չափահաս մարդկանց: Եվ այդ մարդիկ անկեղծ զղջումով դարձի եկան, փոխվեցին: Ի դեպ, այդ հարցը մեզ՝ քահանաներիս էլ շատ են տալիս, երբ գնում ենք տարեցներին քարոզելու: Ասում են. «Տե՛ր հայր, ջահելների՛ն քարոզեք, սրանց ժամանակն արդեն անցել է, ինչո՞ւ եք իզուր ջանք թափում»: Ես ասում եմ. «Ո՛չ, մերը զուտ կրթության գործ չէ, որ միայն երիտասարդը կամ մանուկը կրթվի, մերը հավիտենական կրթության գործն է: Չէ՞ որ տարեցը, թերեւս, ավելի մոտ է գերեզմանին, գոնե չհասցնի՞ մի «մեղա» ասել: Նույն ձեւով ոմանք ասում են. «Ի՞նչ իմաստ ունի այցելել բանտում գտնվող մարդասպանին, որը չի զղջում իր գործած հանցանքի համար, ավելի լավ չէ՞ գնալ նրա մոտ, ով սպասում է Աստծու խոսքին»: Նման ձեւով մտածողներին էլ ուզում եմ ասել. «Նախ՝ բանտում նստած բոլորը չէ, որ մարդասպան են, երկրորդ՝ շատ անարդարացի դատապարտվածներ էլ կան: Թող ներեն ինձ դատաիրավական համակարգի պաշտոնյաները. ասածս գաղտնիք չէ, դա բոլորը գիտեն: Եվ ամենակարեւորը՝ Աստված ժայռերը փշրելու զորություն ունի. ի՞նչ գիտես, որ քո հավատարիմ կեցվածքը չի փշրելու անգամ մարդասպանի սիրտը, ի՞նչ գիտես, թե այդ սիրտն արդեն իսկ փշրված չէ եւ մխիթարության կարոտ: Վերջապես՝ ի՞նչ գիտես, որ հոգու խորքում չի զղջում իր արածի համար: Դու կատարի՛ր քո պարտքը, իսկ նրա զղջալու կամ չզղջալու հանգամանքը թո՛ղ Աստծուն:

**- Եզրափակենք, տե՛ր հայր, վերադառնալով առակին: Քրիստոս-փեսայի եւ Եկեղեցի-հարսի միությունը հավերժական խնդության հանդեսն է, որից բացակայելով՝ զրկվո՞ւմ ենք Արքայությունից:**

- Միանշանա՛կ: Եվ, սակայն, սրտանց մաղթում եմ, որ մեր ժողովրդի զավակներից ոչ մեկը չբացակայի այդ վերին խրախճանքից, երկնային այդ հանդեսից: Իսկ չբացակայելու համար պետք է, որ այս կյանքում քրտնաջան աշխատենք, ուշադիր մտքով աստվածային պատվիրանները կատարենք, աղոթենք, եկեղեցի գնանք, սուրբ Պատարագին մասնակցենք, հաղորդություն առնենք, ծոմ պահենք, ողորմություն տանք, բարի գործեր անենք, մեկ խոսքով՝ այն ամենը, ինչ որ Աստված Ինքն է թելադրում մեզ:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
**web կայք՝ kh-tert.livejournal.com**
Ստոր. տպագր. 16.08.2011 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**